

Դավիթ Խաչատուրյան

# Տեղեկատվության

ազատության իրավունքը ՀՀ-ում.  
օրենսդրական հիմքերը եւ  
իրացման մեխանիզմները

Ուղեցույց  
դատավորների,  
դատախազների,  
քննիչների եւ  
փաստաբանների համար

Յեղիևակ՝ **Դավիթ Խաչատուրյան**  
իրավ. գիտ. թեկնածու

Խմբագիր՝ **Կարեն Անդրեասյան**  
իրավ. գիտ. թեկնածու

## Բովանդակություն

Ներածություն .....	4
Ի՞նչ է տեղեկատվության ազատությունը .....	6
Տեղեկատվության ազատության օրենսդրական հիմքերը քաղաքացիական եւ քրեական դատավարությունում .....	15
Տեղեկատվության ազատության բովանդակությունը քաղաքացիական եւ քրեական դատավարությունում .....	25
Տեղեկատվության ազատության իրավունքի բովանդակությունը եւ իրականացումը քրեական եւ քաղաքացիական դատավարությունում .....	32
ՀԱՎԵԼՎԱԾ 1.....	60
ՀԱՎԵԼՎԱԾ 2.....	73

Ուղեցույցը պատրաստվել է տպագրվել է Ինֆորմացիայի  
ազատության կենտրոնի կողմից ԱՄՆ-ի Պետական դեպարտամենտի  
հասարակայնության հետ կապերի բաժնի տրամադրած դրամաշնորհի  
միջոցներով: Ուղեցույցում արտահայտված կարծիքները,  
եզրակացություններն ու հետեւությունները հեղինակներինն են եւ  
պարտադիր չէ, որ արտահայտեն Պետական դեպարտամենտի  
դիրքորոշումը:

# Ներածություն

## Ձեռնարկի նպատակը

**Վ**երջին տասնամյակում աննախադեպ մեծ թվով երկրներ հատուկ օրենքներ են ընդունել տեղեկատվության ազատության վերաբերյալ: 2003թ. սեպտեմբերի 23-ից այդ երկրների թվում է նաև Հայաստանի Հանրապետությունը:

Տեղեկատվության ազատության մասին օրենքներն ամբողջ աշխարհում հիմնվում են հետևյալ 9 սկզբունքների վրա, որոնց իմացությունը թույլ կտա նաև ճիշտ կիրառել դրանք (կամ ճիշտ օգտվել դրանցից) առօրյա աշխատանքում.

1. տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը պետք է հիմնված լինի տեղեկատվության առավելագույն բացահայտման սկզբունքի վրա,
2. պետական մարմինները պարտավոր են հրապարակել առանցքային նշանակություն ունեցող տեղեկատվությունը,
3. պետական մարմինները պետք է ակտիվորեն նպաստեն բաց կառավարմանը,
4. բացառությունները պետք է սահմանվեն հստակ եւ սպառիչ կերպով,
5. տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցումները պետք է քննարկվեն եւ լուծվեն արագ ու արդարացի կերպով, ինչպես նաև պետք է ապահովվի տեղեկատվություն տրամադրելու մերժման որոշումների վերանայումն անկախ մարմնի կողմից,
6. տեղեկատվություն ստանալու հարցումներ ներկայացնելուց քաղաքացիների խուսափելը չպետք է պայմանավորված լինի դրա համար սահմանված չափազանց մեծ տուրքերով,
7. պետական մարմինների նիստերը պետք է բաց լինեն հասարակության համար,
8. տեղեկատվության առավելագույն բացահայտման սկզբունքին հակասող օրենքները պետք է փոփոխվեն կամ վերացվեն,

9. խախտումների մասին ահազանգ հնչեցնող անհատները պետք է պաշտպանված լինեն:<sup>1</sup>

Օրենքն ինքնին, սակայն, չի կարող տալ բոլոր հարցերի լուծումները: Դրա համար անհրաժեշտ է այսօրինակ ուղեցույցների մշակումը, ինչպես նաև դրանց հիման վրա համապատասխան պաշտոնատար անձանց (դատավորների, դատախազների եւ քննիչների) վերապատրաստումը:

Այս ուղեցույցում դատավոր հասկացության տակ , եթե այլ բան ուղղակիորեն չի բխում ենթատեքստից, նկատի են ունեցվում նաև դատախազները եւ քննիչները: Սրա համար մեզ հիմք է ծառայում հետևյալը.

- 1) ՀՀ գործող Սահմանադրությամբ դատախազությունը ներառված է 6-րդ՝ «Դատական իշխանություն» գլխում,
- 2) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի ուժով արդարացված են համարվում նաև այն անձինք, որոնց նկատմամբ քրեական հետապնդումը մինչդատական վարույթում դադարեցվել է արդարացնող հիմքերով (քր.դատ.օր-ի 35 հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետեր եւ 2-րդ մաս),
- 3) Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան, որը ՀՀ-ի կողմից ստորագրվել է 15.05.2003թ. եւ վավերացվել 08.06.2004թ., առաջին իսկ հոդվածի բ) կետում նշում է հետևյալը «... «դատավոր» տերմինը պետք է ընդգրկի դատախազներին եւ դատական պաշտոններ զբաղեցնող անձանց»:

## Ուղեցույցի օգտագործման հնարավոր եղանակները

Սույն ուղեցույցը կարող է օգտագործվել որպես.

- ուսումնական ուղեցույց տվյալ բնագավառում տեղեկատվությանը տիրապետող անձանց ուսուցանողների համար,
- գործնական ուղեցույց տվյալ բնագավառում տեղեկատվությանը տիրապետող անձանց համար:

<sup>1</sup> www.article19.org

## Մաս առաջին

# Ի՞նչ է տեղեկատվության ազատությունը


1946 թ. ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովն ընդունեց իր առաջին բանաձևերից մեկը: Այն սահմանում էր.

«Տեղեկատվության ազատությունը մարդու հիմնարար իրավունքներից է... եւ ՄԱԿ-ի կողմից կարելի էր կոչ ազատությունների հիմնաքարը»:

Ըստ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի՝ «Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության եւ դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք: Այդ իրավունքը ներառում է իր համոզմունքներին հավատարիմ մնալու ազատությունը եւ ցանկացած միջոցներով ու անկախ պետական սահմաններից տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու եւ տարածելու ազատությունը»:

Այո, տեղեկատվության ազատությունը մարդու բնական եւ անօտարելի իրավունքներից մեկն է՝ իբրեւ խոսքի ազատության կարեւորագույն բաղադրիչ, երաշխիք, սկզբունք եւ նպատակ: Հենց այսպիսի մոտեցում է որդեգրել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, որի 24 հոդվածն այս իրավունքները սահմանում է միատեղված կերպով՝

«Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:

 **Այս առումով բոլոր այն սկզբունքային լուծումները, որոնք տրվում են խոսքի (եւ մամուլի) ազատության հետ կապված հարցերին ընդհանրապես, կիրառելի են մասնավորապես նաեւ տեղեկատվության ազատության ոլորտում:**

Տեղեկատվության ազատության բնույթը եւ սահմանները վերլուծելիս՝ նախ եււառաջ պետք է պարզել մեկ հարց՝ խոսքի եւ մամուլի ազատությունը հարաբերական, թե՞ բացարձակ իրավունք է:

Այս հարցին տարբեր երկրների օրենսդրություններ տալիս են տարատեսակ պատասխաններ: Այսպես, ԱՄՆ-ի Սահմանադրության մեջ կատարված առաջին փոփոխությունը, որն ուժի մեջ է մտել 1791 թ., սահմանում է, որ «Կոնգ-

րեսը չպետք է ընդունի որեւէ օրենք..., որը սահմանափակում է խոսքի կամ մամուլի ազատությունը»:

Ինչպես տեսնում ենք, ԱՄՆ-ի Սահմանադրությամբ ամրագրված է խոսքի եւ մամուլի ազատության բացարձակ իրավունք:

Հետագայում ընդունված միջազգային իրավական ակտերը չզնայցին այդ ճանապարհով, այլ սահմանափակեցին նշված ազատությունը՝ որոշակի դեպքերում եւ որոշակի պայմաններում: Այսպես, «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, սահմանելով յուրաքանչյուրի մտքի ազատության, ինչպես նաեւ իր կարծիքին անարգել կերպով հավատարիմ մնալու իրավունքը, միաժամանակ ամրագրեց, որ այդ «իրավունքներից օգտվելն առաջին հերթին իր մեջ պարունակում է որոշակի պատասխանատվություն եւ ենթակա է որոշակի սահմանափակումների: Այդպիսիք պետք է սահմանված լինեն օրենքով եւ պայմանավորված լինեն հետեւյալ անհրաժեշտությամբ.

- ա)** այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու համար,
- բ)** պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության համար:

Ինչպես տեսնում ենք, միջազգային դաշնագրում ընդհանուր գծերով սահմանված են տեղեկատվության ազատության սահմանափակման միայն ընդհանուր չափանիշները:

Տեղեկատվության ազատության անդրադարձել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիան, որի 10-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ պետական սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում»:

Նկատենք, որ պետության կողմից լիցենզավորման ենթակա ձեռնարկությունների տեսակային ցանկն այստեղ տրված է սպառիչ, եւ ազգային պետությունները չեն կարող այդ ցանկը լրացնել: Նկատենք նաեւ, որ Սահմանադրության 24 հոդվածի տեքստը լրիվ համապատասխանում է խոսքի ազատության՝ Եվրոպական կոնվենցիայի կողմից տրված սահմանմանը:

Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է նաև այն դեպքերը, երբ արտահայտվելու (կամ տեղեկատվության ազատության) իրավունքը կարող է սահմանափակվել: Այդպիսի սահմանափակումները կարող են կատարվել միայն օրենքով, եթե դա է պահանջում՝ «պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունների կամ հանցագործությունների կանխման շահը, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև՝ այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը ապահովելու նպատակով»:

Այսպիսով, Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է այն սոցիալական արժեքների ցանկը, որոնց պաշտպանության համար պետք է սահմանափակվի խոսքի ազատությունը:

Ազգային օրենսդրությունները, ելնելով այդ խնդրից, իրենք պետք է որոշեն նման սահմանափակման շրջանակները՝ կարելի է ինչպես հասարակության, պետության եւ անհատի՝ օրենքով պաշտպանվող արժեքները, այնպես էլ խոսքի ազատությունը:

Հասարակությանը, պետությանը եւ անհատին հավասարապես կարող են վնաս պատճառել ինչպես խոսքի ազատության շրջանակների արհեստական նեղացումը, այնպես էլ դրա բացարձակացումը:<sup>2</sup> Մեր կարծիքով, Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի վերնագիրը («Արտահայտվելու ազատություն») ծավալային առումով շատ ավելի նեղ է, քանի որ խոսքի ազատությունը, որն իրականում ամրագրվում է 10-րդ հոդվածով, ներառում է, արտահայտվելու ազատությունից բացի՝ նաև տեղեկատվության ազատության իրավունքը, նաև՝ այսպես կոչված «լռելու իրավունքը»:

Տեղեկատվության ազատության օրենսդրական հիմքերին ընդհանրապես եւ դրա սահմանափակումներին մասնավորապես մենք կանդրադառնանք ստորև:

Հասարակությունն իրավունք ունի տեղյակ լինելու ոչ միայն այն օրենքների, որոնցով նա ղեկավարվում է, այլև այն իրավական ակտերին, որոնցով այդ օրենքները ամեն կոնկրետ դեպքում, թեկուզ եւ կողմնակի անձանց նկատմամբ կիրառվում են: Սկզբունքն այստեղ նրանում է, որ օրենքի կիրառման ակտը կարծես թե օրենք է սլոյալ կոնկրետ դեպքի համար եւ հասա-

րակությունն իրավունք ունի տեղյակ լինելու ինչպես այդ ակտին, այնպես էլ դրա կայացման գործընթացին: Վերջին հաշվով, ժամանակակից իրավունքի փիլիսոփայության եւ տեսության մեջ իրավակիրառումը, այդ թվում եւ վստահությունն իշխանության նկատմամբ դիտվում է իրավունքի կառուցվածքի բաղկացուցիչ մաս:<sup>3</sup>

Այս դիտարկումն առավել քան արդիական է դատական իշխանության կրկանացման ընթացքում իրավունքի կիրառման պարագայում: Հին անգլիական ասացվածքի համաձայն՝ «արդարադատությունը ոչ միայն պետք է իրականացվի, այլ նաև բոլորը պետք է տեսնեն, որ այն իրականացվում է» ('Justice must not only be done, it must also be seem to be done'):

## Հարց լսարանին



1. Ի՞նչ կիրառական նշանակություն կարող է ունենալ այս սկզբունքը:
2. Տեղեկատվության ազատությունն ունի մի շարք գործառնական հատկանիշներ, որոնց թվում կարելի է նշել՝

- կոռուպցիայի նվազեցում եւ կառավարման արդյունավետություն, պաշտոնատար անձանց հաշվետու լինելը հարկատուների եւ ընդհանրապես հասարակության առջեւ,
- հանրության իրազեկում եւ ակտիվացում. պետական ապարատը ներքեից հսկելուն ունակ քաղաքացիական հասարակության ձեւավորում,
- մարդու հիմնարար իրավունքների դատական պաշտպանության մեխանիզմների արդյունավետության բարձրացում,
- հասարակության մեջ պետական, հասարակական եւ մասնավոր շահերի բախման կանխարգելում, դրանց ներդաշնակության ապահովում՝ որոշումների կայացման ընթացքում համապատասխան շահ ունեցողներին իրազեկ դարձնելու շնորհիվ,
- երկրի էկոլոգիական, սեյսմիկ, պետական, տնտեսական, առողջական, կրթամշակութային անվտանգության ապահովում:

2 Տե՛ս՝ Մ.Խաչատրյան, Դ. Խաչատրյան, Դատական լրագրողի ուղեցույց, Երևան, 2003, էջ 7-9:

3 *Խաչատրյան Դ. Ս. և Կոչարյան Կ. 1990, էջ 260. Էջ 17-18. Կոչարյան Կ. 2003, էջ 42. Կոչարյան Կ. 2003, էջ 17-18. 2003, էջ 42.*

## Չարց լսարանին



Նշված ցանկից յուրաքանչյուր կետի համար ներկայացրեք մեկական օրինակ: Եթե կարող եք, լրացրեք ցանկը՝ դարձյալ բերելով կոնկրետ օրինակներ:

Սրանք հատկանիշներ են, որոնք միաժամանակ պետական ապարատի գործունեության բուն նպատակն են կամ պետք է լինեն: Ուստի, այստեղ անհրաժեշտ ենք համարում կանգ առնել հետևյալ երեք կարեւորագույն հանգամանքի վրա.

**1.** Իսկ միգուցե պետական ապարատն էլ հենց կիրագործի՞ իր առջև դրված խնդիրներն առանց անհարկի «միջամտությունների»: Այս հարցին շատ լավ պատասխան է տվել Չեզելը. «Գերատեսչությունների ու նրանց պաշտոնյաների կողմից իշխանության չարաշահումներից պետության եւ կառավարողների պահովությունը կայանում է մի կողմից՝ անմիջապես նրանց աստիճանակարգության եւ պատասխանատվության, իսկ մյուս կողմից՝ համայնքների, կորպորացիաների իրավունքների մեջ, որոնց միջոցով ինքնաբերաբար արգելքներ են դրվում պաշտոնյային վստահված իշխանության մեջ սուբյեկտիվ կամայականության ներթափանցմանը, եւ առանձին դեպքերում ոչ բավարար հանդիսացած վերադաս վերահսկողությունը լրացվում է ներքեւից իրականացվող վերահսկողությամբ»:Վ Փաստորեն, տեղեկատվությունը հենց այն ճնշման գործիքն է, որով քաղաքացիական հասարակությունը ներքեւից ազդում է պետական ապարատի վրա՝ կանխելով հնարավոր ապօրինությունները:

**2.** Եթե պետական ապարատի առջև դրված են նույն խնդիրները, որոնց լուծմանն է ուղղված տեղեկատվության ազատության իրականացումը՝ հասարակության կողմից, արդյո՞ք այդ խնդիրները պետական մարմինների պարտականությունները չեն, ասել է, թե՝ իրավական մեծաշնորհը: Եվ արդյո՞ք այդ դեպքում քաղաքացիական հասարակության ինստիտուտները եւ առանձին անհատները կարող են որեւէ իրավունք ձեռք բերել տվյալ ոլորտում: Եվ եթե այո, արդյոք այդ իրավունքը չպե՞տք է սահմանվի (սահմանափակվի) ելնելով սոսկ այդ պետական մարմինների կողմից իրենց պարտականություններն օպտիմալ կատարելու տեսանկյունից: Այս հարցը նույնպես իր լուծումն ստացել է իրավունքի փիլիսոփայության կողմից: Ամբողջ խն-

դիրն այն է, որ գոյություն ունեն իրավունքի լիահավասար սուբյեկտներ, որեւէ մեկը մյուսին որեւէ իրավունքով չի օժտում: Իրավահարաբերության մեկ կողմում տեղեկատվության ազատության իրավունքի սուբյեկտն է, իսկ մյուսում, մեր դեպքում՝ քրեական կամ քաղաքացիական վարույթն իրականացնող մարմինները: Նրանց հավասարության բանալին այն է, որ իրավասուբյեկտությամբ նրանք օժտվում են միմյանցից անկախ, հասարակությունից, կոնկրետ մարդուց՝ որպես բոլոր հնարավոր իրավունքների աղբյուրից: Այսպիսով, տեղեկատվության ազատությունը եւ նշված մարմինների իրավունքները (պարտականությունները) չեն կարող միմյանց հակասել, քանի որ իրականացվում են միեւնույն՝ «մարդու» համապատասխան իրավունքների՝ տեղեկատվության ազատության եւ, մասնավորապես, արդար դատաքննության իրավունքի տարբեր հասցեատերերի կողմից: Իրավունքն այսօր դիտարկվում է ոչ թե որպես «տիրապետող դասակարգի՝ օրենքի աստիճանի բարձրացված նույն իրավական նորմերի համակցություն», ինչպես սովորեցնում էին խորհրդային բուհերում, այլ՝ որպես «մարդկանց ազատության համընդհանուր եւ անհրաժեշտ ձեւ»:Վ Միեւնույն իրավական դաշտում չեն կարող լինել միմյանց հակասող իրավունքներ, կամ միմյանց ստորադասված իրավունքի «սուբյեկտներ»:

**3.** Արդյոք հասարակությունն ընդունակ է ընկալելու իրավաբանական այն տերմինոլոգիան, ժարգոնիզմները եւ արդյոք ունակ է խորանալու այն հարցերում, որոնք խրթին են թվում անգամ երկարամյա մասնագիտական կրթություն ստացած անձանց համար:

Իրոք, «կարող է առարկություն լինել, թե ինչպե՞ս լրագրողն ու հասարակ ընթերցողը, մասնագետ չլինելով, կարող են ճշգրիտ կերպով ընկալել, հետազոտել եւ վերարտադրել փաստերը եւ դրանց հիման վրա գալ որոշակի իրավական գնահատականներ պարունակող եզրակացությունների, երբ անգամ առանձին մասնագետներ ի վիճակի չեն անել այդ: Այն, որ առանձին մասնագետներ ի վիճակի չեն այդ անել, առանձին մասնագետների խնդիրն է: Իսկ ինչ վերաբերում է հասարակ մահկանացուների՝ իրավական պրոբլեմների էությունը տեսնելու կարողությանը, ասենք հետևյալը: Հասարակ ընթերցողը կարող է թափանցել այդ էության մեջ, քանի որ ի սկզբանե նյութի մեջ արտահայտվելիքը, վերջ ի վերջո, սահմանափակվում է արդարացիության ու անարդարացիության, բարոյականության ու անբարոյականության տարբերակումով: Դատարանները չպետք է արդարությունը շրջապատեն այնպիսի մասնագիտական պատմեղով, իսկ պրոբլեմի էությունը՝ մշուշեն պրակտիկ եւ

«տեսական» այնպիսի «տերմինաբանությամբ», որ արդարադատությունն ի վերջո օտարվի հասարակությունից:

Այս հարցերին ճիշտ է մոտեցել Չեզելը. «իրավաբանների խավը, որը տիրապետում է օրենքների հատուկ իմացությանը, հաճախ այդ իմացությունը համարում է իր մենաշնորհը եւ գտնում, որ նա, ով իրենց միջավայրից չէ, չպետք է խառնվի իրենց գործերին: Ֆիզիկոսները նույնպիսի վերաբերմունք դրսևորեցին Գյոթեի գույների ուսմունքին, քանի որ նա մասնագետ չէր այդ բնագավառում, դեռ մի բան էլ բանաստեղծ էր: Սակայն, ճիշտ այնպես, ինչպես պետք չէ կոշկակար լինել՝ իմանալու համար, թե կոշիկները պիտանի են, թե՛ ոչ, այդպես էլ հարկավոր չէ մասնագետ լինել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող առարկաների մասին գիտելիքների տիրապետելու համար: Իրավունքը վերաբերում է ազատությանը, ինչն ամենաարժանին ու սրբագանն է մարդու մեջ, եւ նա ինքը, քանզի այն իր համար պարտադիր է, պետք է իմանա այն»:

Իրավաբանական լեզուն չպետք է էլիտար դառնա եւ օտարվի հասարակությունից: Նաեւ հենց այս գիտակցումով է ստեղծվել Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի 81/7 Հանձնարարականը, որն իր 2-րդ սկզբունքի՝ «Պարզեցում դատական գործողությունների ու որոշումների» 5-րդ կետում սահմանում է. «Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն, որպեսզի դատավարական բոլոր գործողությունները կրեն հասարակ բնույթ, օգտագործվող լեզուն՝ ունկնդրի, իսկ դատական որոշումները՝ կողմերի համար լինեն հասկանալի»:

Նման մի նորմ, թեև միայն դատավճռի վերաբերյալ, պարունակում է ՀՀ քր. դատ. օր-ը, որի 369 հ. 2-րդ մասը. «Դատավճիռը շարադրվում է պարզ ու հասկանալի արտահայտություններով»: Նույնպիսի պահանջ պետք է ամրագրվի նաեւ քաղաքացիական դատավարությունում, ընդ որում՝ բոլոր դատական ակտերի, ինչպես նաեւ՝ այն փաստաթղթերի նկատմամբ, որոնք դատական քննության առարկա են:

Այս ամենը կազմում է տեղեկատվության ազատության անմիջական բովանդակությունը, քանի որ ի<sup>6</sup>նչ օգուտ մատչելի այն տեղեկատվությունից, որի բովանդակությունն անհասկանալի է, այսինքն՝ որը տեղեկատվություն չէ հասկացողական իմաստով: Սա նշանակում է, որ տեղեկատվության մատչելիությունն անհնար է առանց նրա բովանդակային մատչելիության ապահովման:<sup>6</sup>

Այսպիսով, լրագրողն ու հասարակ ընթերցողն ի ծնե ունեն նվազագույն

իրավաբանական գիտելիքներ, որոնք լրիվ բավարար են վերը նշված պրոբլեմների էությունն ընկալելու համար: Հենց այս առումով էլ լրագրողները ձեւավորում են հասարակական կարծիք եւ ազդում դատական իշխանության վրա: Ինչ խոսք, ենթադրվում է, որ դատական սխալները վերացվում են դատական վերանայման մեխանիզմների միջոցով: Սակայն, գոյություն ունի արտադատական կամ կորպորատիվ կանխիչ մեխանիզմ, երբ լրագրողների կորպորացիան, ձեւավորելով հասարակական կարծիք, կանխում է դատական սխալը»:

Լրագրողները պարտականություն չունեն հարգելու դատարանի վերջնական որոշման օրինականության եւ հիմնավորվածության կանխավարկածը: Կարող է թվալ, որ սա միակողմանի մոտեցում է. չէ՞ որ հենց մասնավորապես մեղադրական դատավճռի օրինականության եւ հիմնավորվածության կանխավարկածով է հերքվում (բացասվում) մեղադրյալի անմեղության կանխավարկածը, ուստի եւ լրագրողները, որոնք մինչ այդ հարգում էին անմեղության կանխավարկածը, պարտավոր են այժմ էլ հարգել դատարանի օրինական ուժի մեջ մտած ցանկացած, այդ թվում եւ՝ մեղադրական դատավճռի օրինականության եւ հիմնավորվածության կանխավարկածը:

Ոչ: Նախ հիշենք, թե մարդկության պատմության ընթացքում քանի-քանի անգամ է ճշմարտությունը բացահայտվել արտադատավարական ձեւերով, եւ շատ դեպքերում, ցավոք, ապարդյուն՝ անմեղ դատապարտվածների, տուժողների եւ ընդհանրապես ամբողջ հասարակության համար: Այս փաստարկն էլ, մեր կարծիքով, բավական է, սակայն ավելացնենք, որ մեղադրական դատավճռի օրինականության եւ հիմնավորվածության կանխավարկածն իրավաբանական նշանակություն, ուստի եւ ընդհանրապես գոյություն ունի բացառապես մեղադրյալի անմեղության կանխավարկածի նկատմամբ՝ որպես նրա դիալեկտիկական բացասումը քրեական դատավարությունում: Այն չի տարածվում արտադատավարական հարաբերությունների ոլորտի վրա, չի սահմանափակում հասարակության ցանկացած անդամի՝ կարծիք ունենալու, արտահայտելու եւ պնդելու իրավունքը (ՀՀ Սահմանադրության 24 հոդված), եթե այդ կարծիքը հակասում է «իշխանա-հարկադրաբար» արտահայտված կարծիքին: Վերջ ի վերջո, Սահմանադրությունում չի նշված ու չէր էլ կարող նշվել, որ հիշյալ իրավունքները կարող են ենթարկվել սահմանափակումների, եթե հակադրվում են օրինական ուժի մեջ մտած դատական, ինչպես նաեւ այլ ակտերով հաստատված հանգամանքներին»:<sup>7</sup>

Քրեական եւ քաղաքացիական դատավարություններում տեղեկատվության

**6** Ժ.ՄԱԵԿ՝ *Կենտրոնական Եվրոպայի Երկրներում Լրագրողների Պրոֆեսիոնալիզմի Տեսլա*, ԵՊՀ ԳԻՏ ԳԻՏ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, 2001, էջ 80-84

**7** Գ.Նաչատուրյան, Դատական իշխանությունը եւ մամուլը «Դատավորի սեղանի գիրք», Երեւան, 2002, էջ 193-196

ազատությունը կրում է ավելի սահմանափակ բնույթ, քանի որ այստեղ գործում են նաև մասնավոր կյանքի գաղտնիության, բժշկական, որդեգրման, բանկային, առևտրային եւ օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքի իրավունքները: Նշենք, որ ծառայողական, պետական եւ նախաքննական գաղտնիքը նույնպես չպետք է օտարել մարդուց: Դրանք բոլորն էլ նույն «մարդու» իրավունքներն են, որոնք վերջին հաշվով ապահովում են իր եւ իր ընտանիքի անվտանգությունը: Պարզապես, մարդը՝ որպես իրավունքի աղբյուր, այստեղ հանդես է գալիս ավելի կազմակերպված ձեւով, պետական մակարդակում: Նշենք նաև, որ ի տարբերություն բոլոր այլ առանձին ոլորտների, որոնցում գործ ունենք այս կամ այն գաղտնիքի հետ, արդարադատությունը պետական այն գործառույթն է, որտեղ նշված բոլոր գաղտնիքները գործում են միաժամանակ: Եվ որպես սրա հետեւանք՝ տեղեկատվության ազատության իրավունքը քրեական, քաղաքացիական, տնտեսական եւ ցանկացած այլ տիպի դատավարությունում սահմանափակվում է առավելագույնս, այսպես ասած՝ բազմակողմանիորեն: Սահմանափակվում է, բայց չի ժխտվում:

Իրավունքի փիլիսոփայության դիրքերից արվող կարեւորագույն դատողությունն այն է, որ իրավունքի սահմանափակումը երբեք չի նշանակում դրա խախտում: Պարզապես այլ է նրա բովանդակությունը, որի մասին՝ հաջորդ մասում:

## Մաս երկրորդ

# Տեղեկատվության ազատության օրենսդրական հիմքերը քաղաքացիական եւ քրեական դատավարությունում. իրավական աղբյուրների եւ առանձին նորմերի մրցակցություն

ՀՀ Սահմանադրության 24 հոդվածը սահմանում է.

**«Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:**

Այժմ պարզենք, թե ինչ նորմեր են գործում բուն դատավարական ոլորտում՝ կապված տեղեկատվության ազատության հետ, եւ ինչպես են լուծվում նշվելիք իրավական աղբյուրների հնարավոր կոլիզիաները:

ՀՀ Սահմանադրության 39 հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք: Հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, կողմերի անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվության միջոցների եւ հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննության ընթացքում կամ նրա մի մասում կարող է արգելվել օրենքով:



## ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք

### Հոդված 8. Գործերի քննության հրապարակայնությունը

1. Դատարաններում քաղաքացիական գործերի քննությունը դռնբաց է:
2. Գործերի քննությունը դռնփակ նիստում թույլատրվում է օրենքով նախատեսված դեպքերում, ինչպես նաև որդեգրման գաղտնիությունը, քաղաքացիների անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունն ապահովելու, առևտրային կամ այլ գաղտնիք պահպանելու անհրաժեշտության վերաբերյալ միջնորդությունը դատարանի կողմից բավարարվելու դեպքում:
3. Գործը դռնփակ քննելու մասին կայացվում է որոշում:
4. Գործը դռնփակ նիստում քննելիս ներկա են գտնվում գործին մասնակցող անձինք, նրանց ներկայացուցիչները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վկաները, փորձագետները եւ թարգմանիչները, որոնցից վերջովում է ստորագրություն՝ բացահայտված գաղտնիքի տեղեկությունները չհրապարակելու եւ չօգտագործելու մասին:
5. Դռնփակ նիստում գործի քննությունը իրականացվում է քաղաքացիական դատավարության կանոնների, պետական, ծառայողական, առևտրային, բանկային եւ այլ գաղտնիքների մասին օրենսդրության պահանջների պահպանմամբ:

Դատարանի վճիռը բոլոր դեպքերում հրապարակվում է դռնբաց նիստում:

### Հոդված 114. Կարգը դատական նիստում

3. Գործին մասնակցող անձինք եւ դռնբաց դատական նիստին ներկա գտնվողներն իրավունք ունեն կատարել գրառումներ, սղագրություն եւ ծայնագրություն:

Դատական նիստի կինո եւ լուսանկարահանումը, տեսաձայնագրումը, ինչպես նաև հեռարձակումը ռադիոյով եւ հեռուստատեսությամբ կատարվում են կողմերի համաձայնությամբ՝ գործը քննող դատարանի թույլտվությամբ:

## ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք

### Հոդված 16. Դատական քննության հրապարակայնությունը

1. Գործերի դատական քննությունը դռնբաց է:
2. Դռնփակ դատական քննություն անցկացվում է օրենքով նախատեսված դեպքերում՝ հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, կողմերի անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով: Դատարանների դատավճիռները վերջնական որոշումները բոլոր դեպքերում հայտարարվում են հրապարակայնորեն:

Տեղեկատվության ազատության օրենսդրական հիմքերը վերլուծելիս անհրաժեշտ է դիտարկել երեք բնույթի հարաբերություն՝

1. ՀՀ միջազգային պայմանագրեր եւ ՀՀ Սահմանադրություն,
2. ՀՀ Սահմանադրություն եւ ՀՀ գործող օրենսդրություն,
3. ՀՀ գործող տարբեր իրավական ակտեր, մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու մասին» ՀՀ օրենք:

1. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝

«ՀՀ-ում երաշխավորվում է օրենքի գերակայությունը:

ՀՀ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ եւ նրա նորմերը գործում են անմիջականորեն:

Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքները, ինչպես նաև Սահմանադրությանը եւ օրենքներին հակասող ճանաչված այլ իրավական ակտերը իրավաբանական ուժ չունեն:

Օրենքները կիրառվում են միայն պաշտոնական հրապարակումից հետո: Մարդու իրավունքներին, ազատություններին եւ պարտականություններին վերաբերող չհրապարակված իրավական ակտերը իրավաբանական ուժ չունեն:

ՀՀ անունից կնքված միջազգային պայմանագրերը կիրառվում են միայն վավերացվելուց հետո: Վավերացված միջազգային պայմանագրերը Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե նրան-

ցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը:

Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը կարող են վավերացվել Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելուց հետո»:

Այսպիսով, վավերացվելու պահից ցանկացած միջազգային պայմանագրի դառնում է մեր երկրի իրավական համակարգի բաղկացուցիչ մասը: Օրենքն այլ կերպ չի կարող գործել, քան կիրառվելու միջոցով: Ավելացնենք սրան, որ Սահմանադրության նորմերը գործում են անմիջականորեն եւ կզանք այն միակ տրամաբանական եզրակացությանը, որ Սահմանադրությունը եւ վավերացված միջազգային պայմանագրերը՝ որպես ընթացիկ օրենսդրության նկատմամբ նույն Սահմանադրության ուժով նախապատվությամբ օժտված ներպետական օրենսդրության բաղկացուցիչ մաս, իրավակիրառ են, այլ ոչ թե՝ մեկնաբանող գործունեության աղբյուրներ: Այլ կերպ ասած, միջազգային պայմանագրերը քրեական եւ քաղաքացիական դատավարությունների աղբյուր են: Եվ եթե օրենքը կիրառելիս, ակնհայտ է դառնում նրա հակասությունը վավերացված միջազգային պայմանագրին, վերջինս իբրեւ լիարժեք իրավական աղբյուր պետք է անմիջականորեն կիրառվի դատարանի կողմից: Եվ նման անմիջական կիրառման համար կարիք չկա, որ որեւէ մեկը, ասենք՝ ՀՀ Սահմանադրական դատարանը, այս կամ այն օրենքը ճանաչի իբրեւ հակասահմանադրական:

Արդյոք Սահմանադրության մեջ գրված է, որ եթե օրենքները եւ մյուս նորմատիվ ակտերը հակասում են Սահմանադրությանը, ապա սահմանադրական նորմերը չեն գործում անմիջականորեն: Իհարկե՝ ոչ:

Գուցե, վերը նշված անհեթեթության պատճառը ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 3-րդ մասի ավելորդ ձեւակերպումն է, ըստ որի «Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքները, ինչպես նաեւ Սահմանադրությանը եւ օրենքներին հակասող ճանաչված այլ իրավական ակտերն իրավաբանական ուժ չունեն»:

Պարզից էլ պարզ է, որ եթե նորմատիվ ակտերը ճանաչվել են հակասահմանադրական, ապա նրանք չեն կարող կիրառվել, էլ ի՞նչ կարիք կա դա ամրագրել Սահմանադրությամբ:

Հոդվածի տեքստից հետեւում է, որ Սահմանադրությանը հակասող օրենքները կարող են վերացվել կամ համապատասխանեցվել նրան: Ամենեւին էլ պարտադիր չէ, որ Սահմանադրությանը հակասող օրենքների եւ այլ նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ մինչեւ նրանց վերացումը կամ փոփո-

խումն առկա լինի Սահմանադրական դատարանի որոշումը՝ այդպիսիք Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչելու մասին: Դա կարող է անել օրենսդիր մարմինն առանց Սահմանադրական դատարանի որոշման:

Այլ խոսքով, եթե օրենքը կիրառող գտնում է, որ օրենքը հակասում է Սահմանադրությանը, ապա նա պարտավոր է չկիրառել օրենքը եւ կիրառել Սահմանադրությունը, եւ ոչ թե սպասել, որ այդ օրենքը կամ այլ իրավական ակտը Սահմանադրական դատարանի կողմից ճանաչվի Սահմանադրությանը հակասող: Ահա թե ինչու ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 3-րդ մասը պետք է վերացվի, եւ ցանկացած դատարան՝ ինքը որոշի, արդյոք օրենքը հակասում է Սահմանադրությանը, թե՛ ոչ: Իսկ եթե կլինեն առանձին սուբյեկտներ, որոնք կվիճարկեն օրենքի սահմանադրականությունը, ապա դա որեւէ կապ չպետք է ունենա սահմանադրական նորմերի անմիջական գործողության հետ:

Վերը շարադրվածը բերում է մեկ հետեւության, այն է՝ Սահմանադրության եւ օրենքների մեկնաբանությունը պետք է կատարի դատարանը կոնկրետ գործով: Այսինքն՝ այնպես, ինչպես առաջարկել է Թոմաս Հոբսը 350 տարի առաջ. «Օրենքը մեկնաբանողը դատավորն է, որը կարող է դատավճիռը viva voce (յուրաքանչյուր առանձին դեպքում)»:<sup>8</sup>

Մինչեւ ՀՀ քաղաքացիական դատավարության եւ ՀՀ քրեական դատավարության օրենքագրքերի՝ դատավարական աղբյուրներն ամրագրող առաջին հոդվածների վերլուծությանն անցնելը, նախ պարզենք, թե ինչ կարգավիճակով են միջազգային պայմանագրերը մտնում մեր օրենսդրության մեջ: Անգամ բառերի էֆիմոլոգիական վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե վավերացվելու դեպքում միջազգային պայմանագիրը դառնում է ազգային օրենսդրության բաղկացուցիչ մասը, ապա այն այլեւս ոչ թե միջազգային, այլ հենց ազգային օրենսդրության նորմ է: Սահմանադրության 6-րդ հոդվածում գրված է, որ եթե ազգային օրենքներում պարունակվող նորմերը հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին, ապա գործում են առաջիններիս նորմերը: Ստացվում է, որ ՀՀ իրավական համակարգում ունենք դրա բաղկացուցիչ մասը կազմող նորմեր, որոնք նախապատվություն ունեն այդ նույն իրավական համակարգի նույնպես բաղադրիչ մասը կազմող ՀՀ օրենքների նկատմամբ: Այստեղից էլ, բարեխիղճ տրամաբանության առկայությամբ, կարելի է գալ միայն մեկ եզրակացության՝

8 Մ.հաչատրյան, Օրենքի մեկնաբանման պատմությունից, Երեւան, 2001, էջ 20-23



**Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերը, հանդիսանալով ազգային օրենսդրության մի մաս, վերջինիս մեկ այլ մաս կազմող գործող օրենսդրության նկատմամբ դասվում են որպես սահմանադրական նորմեր:**

Իսկ այն, որ անմիջականորեն գործել նշանակում է անմիջականորեն կիրառվել, այլ ոչ թե մեկնաբանվել, կարծում ենք, բոլորին պարզ է: Ճիշտ է, կիրառման ժամանակ միջազգային պայմանագրերը, ինչպես իրավական բոլոր աղբյուրները, մեկնաբանվում են, սակայն դա տեղի է ունենում կիրառման հետ միաժամանակ՝ որպես միասնական մտավոր գործունեություն, այլ ոչ թե որեւէ մարմնի կողմից նախապես, իշխանա-հարկադրաբար արտահայտված կարծիք, որո այնուհետև պետք է դրվի դատավորի կողմից միջազգային պայմանագրի կամ իրավունքի որեւէ այլ աղբյուրի կիրառման հիմքում:

Ասվածից ելնելով՝ անհրաժեշտ ենք համարում շեշտել հետևյալը.

**վավերացված միջազգային պայմանագրերը՝**

- ա) իրենց ֆունկցիոնալ դերով (նախապատվություն),
- բ) ազգային օրենսդրության՝ հենց բաղկացուցիչ մասը լինելով, այսինքն՝ միջազգային իրավունքի նորմեր լինելուց դադարելով,
- գ) մինչև վավերացվելը, Սահմանադրությանը հակասելու դեպքում, վերջինիս մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտության, իսկ ընթացիկ օրենսդրությանը հակասելու դեպքում՝ նման անհրաժեշտության օրենքով ամրագրված բացակայության հանգամանքների ուժով

**ՀՀ Հիմնական օրենքի՝ Սահմանադրության բաղկացուցիչ մասն են:՞**

2. Ի տարբերություն՝ «միջազգային պայմանագրեր - ՀՀ Սահմանադրություն» իրավական աղբյուրների հարաբերություններին, ուր կոլիզիաները բացառված են հենց ՀՀ Սահմանադրության ուժով, ՀՀ իրավական մյուս աղբյուրների հարաբերությունները (այդ թվում՝ տեղեկատվության ազատության իրավունքը կարգավորող) նման հնարավորություն չեն բացառում, որի պարագայում, որպես կանոն, գերակայություն ունեցող իրավական փաստաթղթում, նախատեսվում է նախապատվության համապատասխան ձևերը: Դրանք լինում են ուղղահայաց եւ հորիզոնական:

9 Դ.Խաչատրյան, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան՝ որպես ներպետական իրավունքի անմիջականորեն գործող նորմատիվ ակտ: Օրենքի մեկնաբանում եւ իրավունքի գերակայություն, «Օրինաբեր», N- 7-8, 2003-2004, էջ 48-49

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի ուժով, ուղղահայաց գերակայական հարաբերություններ գոյություն ունեն Սահմանադրության (ներառյալ միջազգային պայմանագրերը) եւ օրենքների, ինչպես նաեւ այլ իրավական ակտերի միջեւ, օրենքների եւ այլ իրավական ակտերի միջեւ («Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, եւ նրա նորմերը գործում են անմիջականորեն», «Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքները, ինչպես նաեւ Սահմանադրությանը եւ օրենքներին հակասող ճանաչված այլ իրավական ակտերը իրավաբանական ուժ չունեն»):

«Տեղեկատվության ազատության մասին օրենքի» 2-րդ հոդվածը նույնպես նախատեսում է հետևյալը՝

- 1. Տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ Սահմանադրությունից, սույն օրենքից եւ իրավական այլ ակտերից:
- 2. Եթե ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

ՀՀ դատական նախադեպային իրավունքը պարունակում է, մասնավորապես՝ վճռաբեկ դատարանի քրեական եւ զինվորական գործերի պալատի որոշումներ, որոնք, փաստորեն հակասահմանադրական են ճանաչում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի առանձին նորմեր:

Մասնավորապես, նկատի ունենք ՀՀ քր. դատ. օր-ի 288 հոդվածը, որը նախատեսում է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին դատարանի որոշման բողոքարկումը միայն վերաքննիչ դատարանում: Մինչդեռ արդեն մի քանի տարի է, ՀՀ վճռաբեկ դատարանը քննում եւ լուծում է նաեւ վերաքննիչ դատարանի որոշումների դեմ բերվող բողոքները՝ հենվելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի վրա, որի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում եւ կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է»: ՀՀ վճռաբեկ դատարանն այստեղ անմիջապես կիրառեց մեջբերված նորմը՝ ամրագրելով, որ ամենեւին էլ կապ չունի, թե Կոնվենցիայում նշված «յուրաքանչյուր ոքը» ազատությունից զրկված է առաջին ատյանի դատարանի որոշմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, թե վերաքննիչ դատարանի՝ համապատասխան բողոքը քննելու արդյունքում կայացված որոշման հիման վրա:

3. Հորիզոնական գերակայությունն առկա է ՀՀ քրեական եւ քաղաքացիա-

կան դատավարության օրենսգրքերի՝ մի կողմից, եւ «Տեղեկատվության ազատության մասին», «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու մասին» (ընդունվել է 24.11.1999թ.) եւ Ղրղոսի վերաբերող այլ օրենքների միջեւ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քաղ.դատ.օր) 1-ին հոդվածի 1-ին կետում ասվում է. «Հայաստանի Հանրապետության դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենսգրքով եւ դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով»:

Ինչպես տեսնում ենք, այստեղ դրված է վերջակետ՝ այսքանն են ՀՀ քաղաքացիական դատավարության աղբյուրները: Բայց ինչու՞ է հանկարծ նույն հոդվածի 2-րդ մասում հատուկ նշվում, որ եթե ՀՀ միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը»: Այսինքն՝ առանց նախապես նշելու, որ միջազգային պայմանագրերը ՀՀ օրենսդրության բաղկացուցիչ մասն են, ասվում է, որ դրանք ունեն նախապատվության իրավունք՝ քաղ.դատ.օր-ի նկատմամբ: Մինչդեռ նման իրավունք ՀՀ քաղ.դատ.օր-ում մատնանշված քաղաքացիական դատավարությունը կարգավորող օրենսդրության աղբյուրների սպառնիչ ցանկում ունի միայն ՀՀ Սահմանադրությունը:

Այստեղ անհրաժեշտ է անել եւս երկու դիտարկում՝ ՀՀ քաղ.դատ.օր-ը կարող էր նաեւ չպարունակել միջազգային պայմանագրով նախատեսված նորմերի նախապատվության դրույթը՝ նախապես նշելով, որ վարույթը կարգավորվում է, առաջին հերթին՝ ՀՀ Սահմանադրությամբ, որի 6-րդ հոդվածում պարունակվում է բովանդակային առումով տառացիորեն նույն նորմը: Սակայն, եւ սա երկրորդ դիտարկումն է, ի տարբերություն Սահմանադրության, քաղ.դատ.օր-ը շեշտում է, որ նախապատվություն ունեցող այդ նորմերը ոչ թե գործում են, այլ հենց կիրառվում են:

Ի տարբերություն քաղ.դատ.օր-ի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քր.դատ.օր-ի) դարձյալ 1-ին հոդվածը իր դարձյալ 1-ին մասում, տառացիորեն ամրագրելով այն դրույթը, որ (տվյալ դեպքում՝ վարույթի) «կարգը սահմանվում է ՀՀ Սահմանադրությամբ, սույն օրենսգրքով եւ դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով», որեւէ նշում չի պարունակում միջազգային պայմանագրերի եւ դրանց նախապատվության մասին:

Այս մոտեցումը, մեր կարծիքով, ավելի ճիշտ է. այն չի բաժանում ազգային օրենսդրության բաղկացուցիչ մաս կազմող իրավական ակտերը ըստ որպես այդպիսիք ամրագրվելուց առաջ նրանց ունեցած կարգավիճակի՝ միջազգային եւ ոչ միջազգային պայմանագրեր:

ՀՀ դատական նախադեպային իրավունքը հետեւողականորեն ընդգծում է ՀՀ քրեական եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքերի գերակայությունն այլ օրենքների նկատմամբ, համապատասխանաբար, քրեական եւ քաղաքացիական գործերի վարույթը կարգավորող իրավական աղբյուրների շարքում:<sup>10</sup>

Ինչ վերաբերում է ՀՀ դատավարական օրենսգրքերի եւ առանձին օրենքների միջեւ նորմերի մրցակցությանը, ապա այստեղ նպատակահարմար ենք համարում նշել հետեւյալը.

1.«Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքը սահմանում է հետեւյալը.

«Սույն օրենքը չի տարածվում քաղաքացիների առաջարկությունների, դիմումների եւ բողոքների քննարկման այն կարգի վրա, որը սահմանվում է ՀՀ քրեական դատավարության, քաղաքացիական դատավարության, աշխատանքային եւ այլ օրենսդրությամբ»:

2. Կիրառական տեսանկյունից կարելու է ՀՀ դատավարական օրենսգրքերի եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի միջեւ մրցակցության հարցերի ուսումնասիրումը, որը կարվի հետագա շարադրանքի ընթացքում:

Ելնելով ՀՀ դատավարական օրենսգրքերի 1-ին հոդվածների դրույթներից, ինչպես նաեւ նորմերի մրցակցության կանոններից՝ անենաընդհանուր ձեւակերպմամբ կարելի է արձանագրել հետեւյալը.

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները քրեական, քաղաքացիական եւ ցանկացած այլ տիպի դատավարությունում՝ այն դեպքերում եւ այն չափով, որքանով այդ հարաբերությունները կարգավորված չեն ՀՀ համապատասխան դատավարական օրենսգրքերով:

Հենց այսպես պետք է ընկալել այն դրույթը, որ գործերով վարույթը կարգա-

10 Մասնավորապես, տես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական եւ զինվորական գործերով պալատի 22.10.2004թ. կայացված որոշումը՝ բանկերից մեկուն խուզարկություն կատարելու վերաբերյալ:

վորվում է օրենսգրքերին համապատասխանող այլ օրենքներով եւ իրավական ակտերով:

## Հարցեր լսարանին

1. Հայտնե՞ք ձեր կարծիքը ՀՀ քրեական եւ քաղաքացիական դատավարության աղբյուրների, մասնավորապես՝ ՀՀ միջազգային պայմանագրերն ու Սահմանադրությունը անմիջականորեն կիրառելու վերաբերյալ:
2. Ի՞նչ օրենքներ եւ ենթաօրենսդրական ակտեր են հակասում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին, նշե՞ք կոնկրետ օրինակներ:
3. Ի՞նչ օրենքներ եւ ենթաօրենսդրական ակտեր են հակասում ՀՀ քաղաքացիական եւ քրեական դատավարության օրենսգրքերին խոսքի եւ մասնավորապես՝ տեղեկատվության ազատության ոլորտում

## Մաս երրորդ

# Տեղեկատվության ազատության բովանդակությունը քաղաքացիական եւ քրեական դատավարությունում

## 3.1. Հրապարակայնության եւ դատամատչելիության սկզբունքներ

Քրեական եւ քաղաքացիական դատավարությունում տեղեկատվության ազատության բովանդակության ցանկացած ուսումնասիրությանը, մեր կարծիքով, պետք է նախորդի դատավարությունների հրապարակայնության եւ դատական փաստաթղթերի մատչելիության (դատամատչելիության) սկզբունքների փոխհարաբերության հարցի քննարկումը:

Տեղեկատվության մատչելիությունը դիտվում է որպես խոսքի (եւ մամուլի) ազատության տարրերից մեկը: Իր հերթին, դատամատչելիությունը իրենից ներկայացնում է դատարանի վերջնական որոշումների մատչելիությունը եւ դատարանի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո գործի նյութերին ծանոթանալու իրավունքը: Այլ չփաստաթղթայնացված տեղեկատվության մատչելիությունը արդարադատության իրականացման ոլորտում ապահովվում է քրեական եւ քաղաքացիական դատավարությունների հրապարակայնության սկզբունքով եւ կարգավորվում ՀՀ քաղ. դատ. օր. 8 եւ 114 եւ քր. դատ. օր. 16 հոդվածներով:

Ինչ վերաբերում է փաստաթղթայնացված տեղեկատվության սահմանմանը, ապա այդպիսին պետք է համարել «նյութական կրիչի վրա ֆիքսված տեղեկատվությունը, որն ունի իր նույնականացումն ապահովող ռեկվիզիտներ»: «Պաշտոնական փաստաթղթեր» տերմինը սույն Հանձնարարականում նշանակում է ցանկացած տեղեկատվություն, որն ամրագրված է ինչ-որ ֆիզիկական չափով, ընկալելի ձևով (գրավոր տեքստեր, տեսաձայնագրություններ եւ լսաձայնագրություններ, լուսանկարներ, էլեկտրոնային մամուլներ, էլեկտրոնային տվյալների շտեմարաններում զետեղված տեղեկատվություն եւ այլն): Թե պետական իշխանության, եւ թե երրորդ անձանց պատրաստած փաստաթղթերն ընդգրկված են սույն սահմանման մեջ» (Եվրախորհրդի անդամ-պետությունների Նախարարների Խորհրդի կողմից պաշտոնական

փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ հանձնարարական, 2002թ.) ՀՀ քր. դատ. օր-ի 122 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Փաստաթուղթ է թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որով կարող են հաստատվել գործի համար նշանակություն ունեցող տվյալները»: Մեր կարծիքով, բավականաչափ հաջող բնորոշում է տրված ՀՀ Տեղեկատվության ազատության մասին օրենքի հոդված 3-ում՝ «տեղեկություն՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երեսույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձեւից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաթապակներ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ)»:

Դատական որոշումների պատճենների տրամադրման ոլորտում այսօր ունենք եզակի դեպքեր, երբ դատամատչելիությունը խախտվում է: Սա անթույլատրելի է: Եթե անձը դատավարության հրապարակայնության սկզբունքի ուժով իրավունք է ունեցել ընկալել դատական որոշումը՝ նախագահողի կողմից այն ընթերցելու ժամանակ, ապա նույն տեղեկատվությունն ստանալու իրավունքն այդ ընթերցումից հետո լրագրողը չի կորցնում: Այլ խոսքերով՝ չնայած ճիշտ է այն, որ դատարանի որոշման հրապարակումը միանվագ դատավարական գործողություն է, սակայն հրապարակայնության սկզբունքը չի «մահանում» դրանից հետո, այլ բացասվում է դատամատչելիության սկզբունքով. մատչելի (ոչ գաղտնի) տեղեկատվությունը ֆիքսված է նյութական կրիչի վրա, եւ իրավասու անձինք (բոլոր նրանք, ովքեր իրավունք ունենին ներկա գտնվելու դատական միստերի դահլիճում դատարանի որոշման հրապարակման ժամանակ) իրավունք ունեն ընկալել այդ նույն տեղեկատվությունը այլ ձևով, մասնավորապես, որոշման պատճենն ընթերցելու միջոցով:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի մեկնաբանության մեջ ասված է.

«Որոշման հրապարակային արձակման պահանջը որեւէ սահմանափակումներ չի նախատեսում եւ կիրառվում է, անգամ եթե բուն քննությունն անցել է դեփակ: Այն չպետք է մեկնաբանվի տառացիորեն՝ որպես որոշումը բոլոր դեպքերում հրապարակավ ընթերցելու պահանջ: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է տվյալ դեպքին համապատասխանող հրապարակայնության ձեւ: Մասնավորապես, կարող է բավարար լինել որոշումը հանձնելը դատարանի գրասենյակ, ուր շահագրգիռ անձը կարող է դրա հետ ծանոթանալ»:

Դատավարության հրապարակայնությունը (դատական քննության դռնբացության իմաստով) եւ դատամատչելիությունը փոխլրացնում են միմյանց:

Ինչպե՞ս: «Եթե դռնբաց դատավարության ընթացքում հասարակությունը չպետք է ներկա գտնվի գործի հանգամանքների քննությանը (հատկապես, երբ վիճարկվում է փաստը), այլ պետք է միայն տեսնի, թե ինչպես է դատավորը գործը զեկուցում եւ հեռանում ու վերադառնում խորհրդակցական սենյակից, ապա այդպիսին չի կարող դիտվել հրապարակային դատավարություն: Հրապարակայնության բովանդակությունը կայանում է նրանում, որ հասարակությունը հնարավորություն է ունենում տեսնել, թե բանավոր քննության ընթացքում ինչպես են հետազոտվում ապացույցները, ինչ փաստարկներ են բերվում եւ վերջապես՝ դատարանն ինչպես է դրանք գնահատում»:<sup>11</sup>

Մյուս կողմից, ամբողջ հասարակությունը չի կարող ներկա գտնվել միստին, բայց այդ «ներկայությունը» հետադարձ կերպով ապահովվում է հանրությանն այդ միստում կատարված դատավարական գործողություններն արտահայտող որոշումներին ծանոթանալու հնարավորություն տալով: Իրոք, «Եվրոպական դատարանն ավելի այն է մեկնաբանում հրապարակայնությունը՝ այն կապելով մասնապացույցների հետազոտման անմիջականության հետ»:<sup>12</sup> Հենց դատավճիռները, վճիռները եւ որոշումներն են, որ իբրեւ առավել նշանակալից փաստաթղթայնացված տեղեկատվության ձեւ, պետք է առավել մատչելի լինեն հանրության համար՝ հետադարձ կերպով ապահովելով դատավարության հրապարակայնությունը՝ ապացույցների գնահատման հրապարակայնության իմաստով:

Դատամատչելիությունը տարածվում է մասնավորապես գործերի նյութերին ծանոթանալու վրա: Դատական որոշումների պատճենները տրամադրելու առումով անհրաժեշտ են բավականին լուրջ մարդկային եւ տեխնիկական միջոցներ, ինչպես նաեւ՝ ժամանակ: Այս պատճառով ՀՀ Դատարանների նախագահների խորհուրդը Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հետ (ABA CEELI) սկսեց եւ շարունակում է իրականացնել ՀՀ Դատական համակարգի ինտերնետային էջի ծրագիրը ([www.armenian-judiciary.am](http://www.armenian-judiciary.am)): Տվյալ պահին կայքի հայերեն լեզվով գործող որոնողական ցանցը պարունակում է ՀՀ Վճռաբեկ դատարանի, քրեական եւ զինվորական գործերի վերաքննիչ դատարանի, քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի եւ տնտեսական դատարանի 8.000-ից ավելի դատական

11. Մ.Խաչատրյան, Արդարացի դատական քննության իրավունք, Երևան, 2004, էջ 30-31

12. Մ.Խաչատրյան, Արդարացի դատական քննության իրավունք, Երևան, 2004, էջ 31

որոշումներ: Քենոնիքս Ինթերնեյշնլի, այնուհետև գերմանական Տեխնիկական Համագործակցության (GTZ) աջակցությամբ հրատարակվել են ՀՀ Վճռաբեկ դատարանի պալատների որոշումները 11 հատորով՝ 1000 օրինակով: Բացի այդ, 2003թ. սկսած ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի շրջանակներում գործում են ՀՀ մարզային ինտերնետային կայքերը, որոնք նույնպես ունեն դատական բաղադրիչ:

Այս քայլերի իրականացումն անհրաժեշտ է ՀՀ-ում դատական նախադեպային իրավունքի ձեւավորման համար, որն անխուսափելի է արդեն մեր երկրի Եվրախորհրդին անդամակցելու եւ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի գործունեության տիրույթը մտնելու փաստի ուժով: Խոսքն այն մասին է, որ վավերացնելով Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիան՝ ՀՀ պարտավորվեց ապահովել իրավունքի գերակայությունը, ինչը ենթադրում է նախ եւ առաջ օրենքի մեկնաբանում իրավակիրառների կողմից եւ, սրա հետեւանքով՝ իրավունքի զարգացում դատական որոշումների տեսքով: Խոսքը նաեւ այն մասին է, որ նախադեպային իրավունքով է շարժվում հենց Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը, որի որոշումները բացահայտում են Կոնվենցիայի բովանդակությունը եւ դրա մի մասն են: Կոնվենցիան էլ, ինչպես գիտենք, մեր երկրի օրենսդրության բաղկացուցիչ մասն է:

Եվրոպական դատարանը բազմիցս է անդրադարձել այս խնդրին, մասնավորապես նշելով, որ վավերացնելով ՄԻԵԿ-ն՝ անդամ-պետությունները պարտավորվել են ապահովել իրավունքի գերակայությունը («Դեվիդ Յորնսբիցն եւ Ադա Աննա Յորնսբիցն ընդդեմ Հունաստանի», 19.03.1997, «Անդրեադիսն ու «Ստրան» ընկերությունն ընդդեմ Հունաստանի», 09.12.1994 եւ այլն): ՀՀ, որպես Եվրախորհրդի անդամ-պետություն, միացել է այդ կազմակերպության Կանոնադրությանը (ընդ. 05.05.1949թ.), որի 3-րդ հոդվածն ամրագրում է. «Եվրոպայի Խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է ընդունի իրավունքի գերակայության սկզբունքը, եւ այն սկզբունքը, որի համաձայն յուրաքանչյուր ոք, ով գտնվում է այդ անդամի իրավագործության ներքո, պետք է օգտվի մարդու իրավունքներից եւ հիմնարար ազատություններից»: Անդամ-երկրների նույն պարտավորությունը հռչակված է նաեւ Եվրոպական Կոնվենցիայի նախաբանում:

Նշված դեպքերից առաջինում Եվրոպական դատարանը նշեց, որ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իրավունքի տարրերից է նաեւ դատական որոշման կատարումը՝ արձանագրելով, որ «եթե այդ հոդվածը պետք է դիտվի իբրեւ բացառապես դատավորին դիմելու եւ դատավարության ընթացքի մատչելիության տեսանկյունից, ապա այդ դեպքում գոյու-

թյուն կունենար այնպիսի իրավիճակների ստեղծման վտանգը, որոնք անհամատեղելի են իրավունքի նախապատվության հետ, որը Կոնվենցիայի անդամ-պետությունները պարտավորվել են հարգել՝ վավերացնելով Կոնվենցիան»:

Մյուս գործով Եվրադատարանը նշել է, որ «իրավունքի գերակայության սկզբունքը եւ արդար դատաքննության հասկացությունը հակադրվում են օրենսդիր իշխանության կողմից ցանկացած միջամտությանն արդարադատության իրականացման գործընթացին՝ միտված վեճի դատական լուծման վրա ազդելուն»: Այնուհետև նշվում է, որ «1974 թ. նոյեմբերի 28-ին կրկին դառնալով Եվրոպայի Խորհրդի անդամ եւ վավերացնելով Կոնվենցիան՝ Հունաստանը պարտավորվեց պահպանել իրավունքի գերակայությունը, որն իր արտացոլումն է գտնում նաեւ ՄԻԵԿ-ի 6.1 հոդվածում»:

«Նույն սկզբունքը Դատարանը կիրառեց նաեւ «Պապագեորգիուն ընդդեմ Հունաստանի» գործով (1997թ.), խախտում դիտելով այն, որ Հունաստանի Խորհրդարանն ընդունել էր օրենք, որում հայտարարվում էր, որ գանգատների որոշակի տեսակներ չեն կարող քննվել դատարանում, եւ որի ուժով դադարեցվել էր մի ամբողջ շարք գանգատների քննությունը, որոնք տարիների ընթացքում գտնվում էին դատական վարույթներում: Անգամ եթե բացակայում է օրենսդրական միջամտությունը, սակայն դատարանը հրաժարվում է վեճի լուծման համար առաջնային նշանակություն ունեցող փաստերը քննելուց՝ հրաժարվելով, այսպիսով, սեփական իրավասությունից, ապա առկա է դատարանի մատչելիության իրավունքի խախտումը (Տերրա «Վոնինգենն ընդդեմ Նիդերլանդների», 1996)»: Ուսուցողական մեծ նշանակություն ունի Եվրոպական դատարանի մեկ այլ նախադեպը՝ «Բոմարտանն ընդդեմ Ֆրանսիայի» գործով Եվրոպական դատարանի կողմից 24.11.1994թ. ընդունված որոշումը. «Պետական Խորհուրդը հետաձգել էր գործով որոշման կայացումը մինչ այն ժամանակ, երբ արտաքին գործերի նախարարը կարտահայտվի այն համաձայնագրի մեկնաբանման վերաբերյալ, որը վկայակոչում էին դիմումատուները: Նախարարը տվել է իր մեկնաբանությունը, եւ Պետական Խորհուրդը, իրեն պարտադրված համարելով նախարարի որոշմամբ, շահագրգիռ անձանց պահանջները թողել է առանց բավարարման:

Դատարանն ընդգծեց, որ Պետական Խորհուրդն իր առջեւ դրված իրավական հիմնախնդրի լուծման համար հենվել է պատասխանատու պաշտոնատար անձի վրա, որը մտնում է գործադիր իշխանության համակարգի մեջ՝ ապավինելով գործադիր իշխանության կողմից ընտրված մեկնաբանությանը: Ավելին, նախարարության պատասխանատու պաշտոնատար անձի միջամտությունը, որը վճռորոշ նշանակություն է ունեցել դատական վեճի ելքի

համար, ենթակա չի եղել որեւէ զանգատարկման շահագրգիռ անձանց կողմից, որոնք, ի լրացումն ամենի, որեւէ հնարավորություն չեն ունեցել արտահայտվելու դատական որոշման կայացման պրեյուդիցիոնալ հետաձգման, ինչպես նաեւ հարցի ձեւակերպման վերաբերյալ: Մինչդեռ, միայն այն մարմինն է արժանի «դատարան» կոչվելու՝ ՄԻԵԿ-ի 6.1 հոդվածի իմաստով, որն օգտվում է դատարանի իրավասության լրիվությունից եւ բավարարում է մի շարք պահանջներին, ինչպիսիք են անկախությունը գործադիր իշխանության եւ քննությանը մասնակից կողմերի հանդեպ: Տվյալ դեպքում, Պետական խորհուրդն այդպիսին չէ: ՀՀ Ազգային ժողովը 18.02.2004թ. ընդունել է ՀՀ քաղ.դատ.օր-ի մի շարք հոդվածներում (132-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ պարբերություն, 138-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ պարբերությունը, 218-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետ, 226-րդ հոդվածի 1-3-րդ ենթակետեր, 238-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետ) փոփոխություններ կատարելու մասին օրենքը, որի իմաստն այն է, որ ՀՀ միջազգային պայմանագրերը ՀՀ օրենքների հետ միասին ձեռք են բերում իրավակիրառ գործունեության աղբյուրի լիիրավ կարգավիճակ, որոնց սխալ մեկնաբանումը (հոդված 226) համարվում է «նութական իրավունքի նորմերի խախտում կամ սխալ կիրառում դատարանի կողմից»:

Վերջապես, դատական նախադեպային իրավունքը որակական նոր մակարդակի վրա է բարձրացնում քաղաքացիների, այդ թվում՝ լրագրողների եւ լրատվամիջոցների՝ դատարանի եւ օրենքի առջեւ հավասարության սկզբունքը: Անխուսափելիորեն, այն պահանջում է դատական որոշումների եւ ընդհանրապես դատական գործունեության մատչելիության նույնպիսի ռեժիմ (իհարկե, հայտնի սահմանափակումներով), որ գոյություն ունի, համապատասխանաբար, օրենքների եւ խորհրդարանի գործունեության պարագայում: Հենց այս փիլիսոփայությունն է ընկած Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի՝ անդամ-երկրներին ուղղված «Իրավական տեղեկատվական-որոնման համակարգերում դատական որոշումների ընտրության, մշակման, ներկայացման եւ արխիվացիայի վերաբերյալ» (ընդ. 11 սեպտեմբերի 1995 թ./ N-R /95) 11 Հանձնարարականի հիմքում, որը սահմանում է.

**«... բոլոր դատարանների պրակտիկայի վերաբերյալ լրիվ տեղեկացված լինելը օրենքի արդարացի կիրառման հիմնական պայմաններից մեկն է»,**

**«... արդարադատության իրականացման համար չափազանց կարեւոր է, որպեսզի դատական պրակտիկայի վերաբերյալ տեղեկատվության որոնման համակարգերը լինեն օբյեկտիվ եւ ներկայացուցչական»,**

**«... կոմպյուտերացված համակարգերն ավելի հաճախակի օգտագործվում են իրավական հետազոտությունների համար եւ ... դատական որոշումների աճող թիվն ու բարդությունը պայմանավորում են այդ նոր մեթոդների առավել լայն կիրառումը»,**

**«... տեղեկատվության այդ նոր միջոցները պետք է մատչելի լինեն հասարակայնության լայն շրջանակների եւ հատկապես՝ իրավաբանների համար», հետեւաբար, անհրաժեշտ է՝**

**«ձեռնարկել պատշաճ միջոցներ ապահովելու բոլոր օգտագործողների ազատ մուտքը իրավական տեղեկատվական-փնտրողական համակարգերին, որոնք բաց են հանրային օգտագործման համար»:**

95/11 Հանձնարարականը նշում է նաեւ, որ «վերջին դատական որոշումները պետք է ավտոմատացված համակարգի մեջ մտցվեն կանոնավոր կերպով եւ ողջամիտ ժամկետներում»:

Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի մեկ այլ՝ N-R /84/ 5 Հանձնարարականը անդամ-երկրներին՝ «Դատական համակարգի կատարելագործմանն ուղղված քաղաքացիական դատավարության սկզբունքների վերաբերյալ» (ընդ. 28 փետրվարի 1984 թ.) իր 9-րդ սկզբունքում սահմանում է. «Դատարանները պետք է իրենց տրամադրության տակ ունենան ամենաժամանակակից տեխնիկական միջոցները, որպեսզի կարողանան արդարադատություն իրականացնել ամենարդյունավետ ձևով, մասնավորապես՝ դեպի իրավունքի տարբեր աղբյուրները մուտքի հեշտացման միջոցով»:



## Մաս չորրորդ

# Տեղեկատվության ազատության իրավունքի բովանդակությունը եւ իրականացումը քրեական եւ քաղաքացիական դատավարությունում

## 4.1. Սուբյեկտներ (ով ունի տեղեկություն ստանալու իրավունք)

ՀՀ Սահմանադրության 24 հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, իրացնելով սահմանադրական նորմը, նշում է հետևյալը՝

1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալ իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:
2. Օտարերկրյա անձինք սույն օրենքով նախատեսված իրավունքներից եւ ազատություններից կարող են օգտվել միայն օրենքով եւ (կամ) միջազգային պայմանագրով սահմանված դեպքերում:
3. Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում»:

Տեղեկատվության ազատությունը, իր բնույթով եւ ըստ սահմանման, յուրաքանչյուրի իրավունքն է: Այլապես անհնար էր պատկերացնել ազատություն, որը քաղաքացիական հասարակության մեկ անդամին տրված է, իսկ մյուսին՝ ոչ: Սկզբունքն այն է, որ տեղեկատվության ազատության իրավունքի

սուբյեկտները չեն տարբերակվում: Իսկ օրենսդրության մեջ առկա ցանկացած տարբերակում ոչ թե նշանակում է, որ տվյալ կոնկրետ դեպքում տեղեկատվության ազատությունից օգտվում են որոշակի անձինք, այլ՝ որ տեղեկատվությունն ինքնին արդեն սահմանափակված բնույթի է, կոնկրետ իրավահարաբերության առարկա է՝ իրավահարաբերության, որի մյուս տարրերն են կողմերը եւ նրանց իրավունքներն ու պարտականությունները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում այլ անձանց եւ, մասնավորապես, լրագրողների իրավունքը՝ ծանոթանալու դատական նիստի արձանագրությանը: Նման իրավունք վերապահված է միայն կողմերին: Օրինակ, ըստ օրենսգրքի 59 հոդվածի, տուժողը իրավունք ունի՝

**կետ 8.** «ծանոթանալ քննչական եւ այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա մասնակցել է ..., ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը եւ ներկայացնել դրա մասին իր դիտողությունները»:

**կետ 9.** «նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել եւ գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություններ»:

**կետ 11.** «իր խնդրանքով անվճար ստանալ քրեական գործը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումների պատճենները, մեղադրական եզրակացության կամ եզրափակիչ որոշման պատճենը, ինչպես նաեւ դատավճռի կամ դատարանի՝ այլ վերջնական որոշման պատճենը»:

Նույնպիսի իրավունքներ սահմանված են դատավարության կողմ հանդիսացող մյուս սուբյեկտների համար եւս՝

- քաղաքացիական հայցվոր (61 հոդվածի 1-ին մասի 7, 8 եւ 11-րդ կետեր),
- կասկածյալ (63 հոդվածի 2-րդ մասի 2, 3, 4, 15, 16-րդ կետեր),
- մեղադրյալ (65 հոդվածի 2-րդ մասի 1, 2, 15, 16, 19 կետեր),
- պաշտպան (73 հոդվածի 1-ին մասի 1, 6, 11, 12, 14 կետեր),
- քաղաքացիական պատասխանող (75 հոդ. 1-ին մասի 8, 9, 12 կետեր),
- տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչ (77 հոդվածի 1-ին մասի 10-12, 14 կետեր),
- տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչ (79 հոդվածի 1-ին մասի 8-10 կետեր),

- տուժողի իրավահաջորդ (80 հոդվածի 4-րդ մաս):

Այս անձանց համար տվյալ ոլորտում կան որոշակի տարբերություններ, որոնք բխում են դատավարության կոնկրետ մասնակիցների կարգավիճակից: Սակայն, սկզբունքը մնում է այն, որ դատավարական գործընթացն անբարձր փաստաթղթերին կարող են ծանոթանալ միայն դատավարության կողմերը:

Նույն մոտեցումն ունի նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, որի 28 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը նախատեսել է, որ «գործին մասնակցող անձինք իրավունք ունեն՝ ծանոթանալ գործի նյութերին, քաղվածքներ անել, ստանալ դրանց պատճենները՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի 8-րդ հոդվածի եւ այլ օրենքների պահանջները»:

ՀՀ քաղ.դատ.օր-ում 18.02.2004թ. կատարված լրացումով նոր հոդված նախատեսվեց տվյալ ոլորտում.

Հոդված 55<sup>1</sup> . Փաստաթղթերից օգտվելը

Գործին մասնակցող անձինք իրավունք ունեն ծանոթանալու գործում առկա փաստաթղթերին, ինչպես նաև վերցնելու դրանց պատճենները, լուսապատճենները, դրանցից կատարելու քաղվածքներ, ստանալու փաստաթղթերից իրենց համար հասկանալի լեզվով կատարված թարգմանությունների տեքստերը»:

Ինչ վերաբերում է դատավարության արդյունքում կայացվող վերջնական որոշումներին (դատավճիռ, վճիռ կամ որոշում), ապա դրանց իրավունք ունեն ծանոթանալ բոլորը:

Ի դեպ, դատարանից փաստաթղթեր ստանալու լրագրողների իրավունքները որեւէ կերպ չեն տարբերվում հանրության այլ անդամների նույն իրավունքից: Լրագրողների համար չեն կարող սահմանվել այնպիսի իրավունքներ, ինչպես նաև նախատեսվել այնպիսի պարտականություններ, որոնք հասարակության այլ անդամների կարգավիճակի համեմատ կարող են դիտվել որպես խտրականություն:

Նման խտրականություն բացառվում է նաև լրատվամիջոցների միջև: Օրինակ, երբեմն հարց է ծագում՝ հիմնավորված է արդյոք, որ մի լրատվամիջոցի ներկայացուցիչը (օրինակ՝ պետական) իրավունք ունենա ավելի շատ տեղեկատվություն ստանալ, քան մեկ այլ:

Լրագրության ոլորտում միջազգային չափանիշներից մեկն էլ այն է, որ լրագրողները որպես մեկ միասնական կորպորացիա պետք է պայքարեն տեղե-

կատվության մենաշնորհացման դեմ: Ի դեպ, այդ դրույթն ամրագրված է նաև ՀՀ իրավական թեմաները լուսաբանող լրագրողների մասնագիտական վարքագծի կանոնագրքում, որի 9-րդ՝ «Տեղեկատվության մատչելիության եւ դրա մենաշնորհի դեմ պայքարելու սկզբունքն» ամրագրում է.

«Լրագրողը հետեւողական է՝ օրենքով պաշտպանվող գաղտնիք չպարունակող տեղեկությունների մատչելիության ապահովման հարցում: Լրագրողը պարտավոր է հաղորդել տեղեկատվության մատչելիության անօրինական եւ անհիմն սահմանափակման դեպքերի մասին:

Լրագրողը իրավունք ունի եւ պարտավոր է պայքարելու տեղեկատվության մենաշնորհացման դեմ»:

Տեղեկատվության ազատության իրավունքը երկրի կառավարմանը մասնակցելու իրավունք է, երկրի, ուր օրենքներն ընդունվում են ընտրովի մարմինների կողմից, եւ որոնց կատարման նկատմամբ հասարակությունն ունի հսկողություն իրականացնելու երբեւիցե չզիջվող իրավունք: Եվ ինչ խոսք, որեւէ խտրականություն այդ հսկողությունն իրականացնելիս չի կարող սահմանվել, այն էլ, մասնավորապես, «հսկվողների» կողմից՝ ի դեմս հավատարմագրման իր դարձ ապրած ինստիտուտի:

## Հարց լսարանին


Ինչո՞վ կարող է հիմնավորվել սուբյեկտային այս կամ այն սահմանափակումը տեղեկատվության ազատության առումով.

- որո՞նք են այն հիմնավորումները, որ միայն գործի կողմերին են հնարավորություն տալիս ստանալ դատարանի վերջնական որոշում չհամարվող փաստաթղթերը,
- որո՞նք են այն հիմնավորումները, որ միայն գործի կողմերին են հնարավորություն տալիս ստանալ դատարանի վերջնական որոշումները,
- որո՞նք են այն հիմնավորումները, որ անհրաժեշտ են դարձնում տեղեկատվությունը միայն այս կամ այն լրատվամիջոցին տրամադրելը կամ նրա միջոցով հաղորդելը (հեռարձակելը), արդյոք պաշտոնական տեղեկատվության միջոցներն իրավունք ունեն գոյություն ունենալ, եւ եթե այո, ո՞րն է դրա իմաստը, կարո՞ղ է, արդյոք պաշտոնական եւ ոչ պաշտոնական տարբերակումն ազդել տեղեկատվության ազատության վրա:

## 4.2. հասցեատերեր (ո՞ւմ պարտավորությունն է տեղեկություն տրամադրելը, ո՞ւմ դիմել)

Տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման հասցեատերն այն անձն է, որը տիրապետում է տրամադրման ենթակա տեղեկատվությանը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը (հոդված 3) տեղեկատվություն տնօրինող անձանց բնորոշում է որպես՝

 **«տեղեկություններ ունեցող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններ եւ դրանց պաշտոնատար անձինք».**

Հանրային նշանակության կազմակերպությունների պարագայում, մեր կարծիքով, անհրաժեշտ է օգտվել Եվրախորհրդի հանձնարարականներից, որոնք խորհուրդ են տալիս այս հարցը լուծելիս «ուշադրություն դարձնել ոչ թե այն բանի վրա, թե ինչ են այդ մարմինները, այլ ինչ են դրանք անում»:<sup>13</sup> Մեր կողմից ուսումնասիրվելիք ոլորտում առաջին հերթին խոսք պետք է զնա նախաքննության եւ հետաքննության մարմինների կողմից կայացվող որոշումներին ծանոթանալու հանգամանքի մասին: Մասնավորապես, քանի որ նրանք իրականացնում են արդարադատություն՝ անձին անմեղ ճանաչելով ՀՀ քր.դատ.օր-ի 66 հոդվածի համաձայն, ուստի արդարացնող հիմքերով (քր.դատ.օր-ի 35 հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետեր եւ 2-րդ մաս) գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները պետք է մատչելի լինեն ճիշտ այնպես, ինչպես արդարացման՝ դատարանի կողմից արձակված դատավճիռները:

Դատարանները, դատախազությունները եւ ընդհանրապես քրեական գործերով նախաքննություն եւ հետաքննություն իրականացնող մարմիններ ներկայացնող հիմնարկներն ընկնում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի գործողության տակ՝ պահպանելով օրենքով պաշտպանվող գաղտնիքների ռեժիմը եւ քրեական դատավարության օրենսգրքի այն բոլոր նորմերը, որոնք կարգավորում են այս կամ այն հարցը: Եթե բանաձեվելու լինենք այն չափանիշը, որով նշված մարմինների գործունեությունը կարգավորվում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով, ապա պետք է ասենք, որ այդ գործունեությունը՝

**1.** իրենից ներկայացնում է տվյալ հիմնարկի, այլ ոչ թե քրեական դատավարության սուբյեկտի, գործունեության մի մաս, որն իրականացնում է տվյալ քրեական գործի վարույթը, այսինքն՝ ոչ թե քրեադատավարական, այլ՝ վարչարարական գործունեություն է,

**2.** ուղղված է ոչ թե քրեական դատավարության խնդիրների լուծմանը, այն է՝ գործով ճշմարտության բացահայտմանը եւ կողմերի իրավունքները պաշտպանելուն, այլ ամբողջ հասարակության տեղեկացված լինելու իրավունքն իրականացնելուն, անկախ նրանից, թե ում հետ է տվյալ հիմնարկը մտնում իրավահարաբերության մեջ,

**3.** այդ գործունեության արդյունքում կայացվող որոշումները չեն ազդում քրեական գործի ընթացքի եւ ելքի վրա:

Հենց այդ գործունեությունն իրականացնելիս, ըստ օրենքի 12-րդ հոդվածի, տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

- 1) ապահովել տեղեկությունների մատչելիությունը եւ հրապարակայնությունը,
- 2) իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումը,
- 3) տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի եւ իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն,
- 4) սահմանել իր կողմից բանավոր եւ (կամ) գրավոր տեղեկությունների տրամադրման կարգը,
- 5) նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին:

Օրենքով բավականին հաջող է լուծված եւ այն հարցը, թե ով է պատասխանատու տրամադրման ենթակա տեղեկատվությունը տրամադրելու համար՝

**«Հոդված 13.** Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձը

1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը կարող է լինել տեղեկատվություն տնօրինողի նշանակած պաշտոնատար անձը կամ տեղեկատվություն տնօրինողի ղեկավարը:
2. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձն օրենսդրությամբ սահմանված կարգով՝

13. [www.article19.org](http://www.article19.org)

1) ապահովում է տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը,

2) տեղեկություն փնտրողին մատչելի ձևով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները եւ ձեւերը,

3) մշակում է ստացված հարցումների վիճակագրական եւ ամփոփ տվյալները»:

Տեղեկատվության տրամադրումը, այսպիսով, որպես կանոն հիմնարկի ղեկավարի կամ նրա կողմից ad hoc կարգով, այսինքն՝ տվյալ տեղեկատվությունը տրամադրելու մասին հարցմանը պատասխանելու համար (կամ՝ հատուկ տվյալ դեպքի համար) նշանակվող անձի կողմից է իրականացվում: Սակայն, աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու առումով անհրաժեշտ է, որպեսզի ցանկացած հիմնարկում առանձնացվեն հաստիքներ՝ մամուլի եւ հասարակայնության հետ կապերով, որոնք էլ կկատարեն այդ աշխատանքը: Կենտրոնական մարմիններն այդպիսի աշխատակիցներ կամ բաժիններ ունեն: Պարզապես, պետք է այդ պրակտիկան տեղայնացնել եւ տվյալ մարմնի բոլոր օղակներում ապահովել նրանց գործունեությունը, իհարկե՝ ըստ անհրաժեշտության: Մասնավորապես ՀՀ դատաիրավական բարեփոխումների ծրագրով նախատեսված է, որ բոլոր դատարանները պետք է ունենան համապատասխան խորհրդատուներ:

### Հարցեր լսարանին

1. Արդյոք առանձին աշխատակից ունենալը հիմնարկի ղեկավարին զրկում է այս կամ այն տեղեկատվության վերաբերյալ հարցումն ըստ իր հայեցողության այլ անձին մակագրելու իրավունքից:

2. Ինչպիսի՞ չափանիշներ պետք է կիրառել տվյալ մարմնի՝ կենտրոնականից բացի այլ օղակներում նման ստորաբաժանումներ (հաստիքներ) ստեղծելու համար:

3. Արդյոք կան դեպքեր, երբ տեղեկատվության համար անհրաժեշտ է դիմել միայն կենտրոնական մարմնին:

## 4.3. Օբյեկտներ (ինչ տեղեկատվության համար կարելի է դիմել, գաղտնի տեղեկատվության սահմանները եւ ձեւերը)

Այս հարցը վերլուծելիս նախ եւ առաջ պետք է նկատել, որ տեղեկատվության ազատության իրավունքի օբյեկտները երկու բնույթի են՝

1. տեղեկություններ, որոնք տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է տրամադրել հանրությանը՝ անկախ այդ մասին որեւէ մեկից հարցում ստանալու: Այսպես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում եւ հրապարակում է իր կողմից տեղեկություն տալու կարգը, որը փակցնում է իր գտնվելու վայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում: Տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձևով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը: Եթե ՀՀ Սահմանադրությամբ եւ (կամ) օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է\* իր գործունեությանն առնչվող այլ տեղեկություններ, որոնք մանրամասն շարադրված են Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասում,
2. տեղեկություններ, որոնք տեղեկություն տնօրինողը տրամադրում է ad hoc կարգով, այսինքն՝ տվյալ տեղեկատվությունը տրամադրելու մասին հարցման առկայությամբ:

Քանի որ 1-ին կետում նշված կարգով համապատասխան տեղեկությունները սահմանվում են օրենքով, ապա այստեղ որեւէ հարց չի ծագում դրանց հետ կապված սահմանափակումների առումով, քանի որ գործում է օրենքների՝ միմյանց չհակասելու կանխավարկածը: Երկրորդ դեպքում տեղեկատվությունը հայցում են քաղաքացիները, եւ սահմանափակման հարցն այստեղ դրված է ավելի սուր:

\* ՀՀ Տեղեկատվության մասին օրենքի 3-րդ հոդվածի համաձայն հրապարակում է համարվում «տեղեկությունը մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներով, համաշխարհային համակարգչային ցանցով (այսուհետ՝ Ինտերնետ), ինչպես նաեւ օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնելը եւ մատչելի դարձնելը»:

խոսքի ազատությունն ընդհանրապես եւ տեղեկատվության ազատության իրավունքը մասնավորապես սահմանափակվում են, եթե

1. համապատասխան տեղեկությունը պարունակում է օրենքով պաշտպանվող գաղտնիք (պետական, ծառայողական, բանկային, առետրային, որդեգրման, բժշկական, նախաքննության եւ հետաքննության եւ այլն),
2. նրա գաղտնի պահվելն անհրաժեշտ է էլնելով քաղաքացիների եւ պաշտոնատար անձանց անձնական եւ այլ անվտանգության տեսակետից (օրինակ, գործին մասնակցող անձանց՝ դատավորի, վկայի, տուժողի պահպանության վերաբերյալ տեղեկությունների հրապարակում:

Նշված սահմանափակումները բխում են համաչափության սկզբունքից, որը նշանակում է, որ տեղեկատվության ազատության իրավունքը, ինչպես ցանկացած իրավունք, իր բովանդակությունն ու սահմաններն է ձեռք բերում այլ իրավունքների հետ միաժամանակ: Սրանից էլնելով էլ սահմանվում է այն սոցիալական արժեքների ցանկը, որոնց պաշտպանության համար պետք է սահմանափակվի խոսքի ազատությունն ընդհանրապես եւ տեղեկատվության ազատության իրավունքը մասնավորապես (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մաս, ՀՀ Սահմանադրության 39 հոդված, ՀՀ քաղ.դատ.օր-ի 8-րդ հոդվածի 2-5-րդ մասեր, ՀՀ քր.դատ.օր-ի 16-րդ հոդվածի 2-րդ մաս): Նույն արժեքներն ամրագրված են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում:

### **Հոդված 8. Տեղեկատվության ազատության սահմանափակումները**

1. Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝
  - 1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առետրային գաղտնիք,
  - 2) խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը,
  - 3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները,
  - 4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք):

5) խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ)հարակից իրավունքները:

2. եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:

Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝

- 1) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ տարերային(ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին եւ դրանց հետեւանքներին,
- 2) ներկայացնում է ՀՀ տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը,
- 3) չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա ՀՀ սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:»

Նշվածներից բացի, ցանկացած տեղեկատվություն բաց է տրամադրման համար: Հիմնական մոտեցումն այն է, որ ինչպես եւ ցանկացած ազատություն, տեղեկատվության ազատությունը եւս գործում է «ինչ արգելված չէ, թույլատրված է» սկզբունքով: Սա քաղաքացիական հասարակության յուրաքանչյուր անդամի յուրաքանչյուր իրավունքի անկյունաքարն է: Մինչդեռ, պետական մարմինները եւ դրանց պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար հատուկ լիազորված են օրենքով (ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդված):

### **1. Պետական եւ ծառայողական գաղտնիք**

«Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի (ընդ. 03.12.1996թ.) 2-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական գաղտնիքը ՀՀ ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, եւ որոնց տարածումը կարող է ծանր հետեւանքներ առաջացնել ՀՀ անվտանգության համար:

Ծառայողական գաղտնիքը սույն հոդվածի առաջին մասով նախատեսված բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պե-

տության կողմից, եւ որոնց տարածումը կարող է այլ վնաս հասցնել ՀՀ անվտանգությանը: Այդպիսի տեղեկությունները, որպէս կանոն, պարունակում են պետական գաղտնիքի մաս կազմող տվյալներ, սակայն, ինքնին չեն բացահայտում պետական գաղտնիքը:

Պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունները համարվում են ՀՀ սեփականությունը եւ պահպանվում ու պաշտպանվում են պետության կողմից»:

ՀՀ կառավարության թիվ 665 որոշմամբ (ընդ. 29.10.1998թ.) հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկի մշակման կարգը», որը վկայակոչում է վերը նշված օրենքի 9 հոդվածին՝ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու ենթակա տեղեկությունները»: Վերջիններս դասակարգվում են պետական գաղտնիք կազմող տեղեկություններ՝

- 1) ռազմական,
- 2) արտաքին հարաբերությունների,
- 3) տնտեսության, գիտության եւ տեխնիկայի,
- 4) հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառներում:

ՀՀ կառավարության թիվ 173 որոշմամբ (ընդ. 13.03.1998թ.) հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքը կազմող տեղեկությունների ցանկը»:

Մեր կարծիքով, ՀՀ օրենսդրությունն այս ոլորտում պետք չէ ենթարկել որեւէ փոփոխությունների՝ ելնելով այն իրավիճակից, որում գտնվում է Հայաստանի Հանրապետությունը:

Քննարկվող հարցին վերաբերող ՀՀ քր.օր-ով նախատեսված հանցակազմերը հետեւյան են՝

**Հոդված 299.** Պետական դավաճանությունը

**Հոդված 302.** Լրտեսությունը

**Հոդված 306.** Պետական գաղտնիք հրապարակելը

**Հոդված 307.** Պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերի կամ համակարգչային տեղեկատվության հետ վարվելու կանոնները խախտելը:

## 2. Բանկային եւ առեւտրային գաղտնիք

Ըստ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի (ընդ. 07.10.1996թ.) 4-րդ հոդվածի՝

1. Բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպէս նաեւ նրա առեւտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները եւ նրա վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, եւ բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ:
2. Բանկերի վերահսկողության կապակցությամբ բանկերի եւ դրանց հաճախորդների վերաբերյալ Կենտրոնական բանկին հայտնի դարձած սույն հոդվածի առաջին մասում սահմանված տեղեկությունները համարվում են բանկային գաղտնիք: Բանկերը համարվում են Կենտրոնական բանկի հաճախորդներ:

Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (ընդ. 17.06.1998թ.) 141 հոդվածի, որը զետեղված է «Քաղաքացիական իրավունքի օբյեկտները» բաժնի «Ընդհանուր դրույթներ» գլխում՝

1. Տեղեկատվությունը ծառայողական, առեւտրային կամ բանկային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առեւտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն եւ տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար:
2. Տեղեկությունները, որոնք չեն կարող ծառայողական, առեւտրային կամ բանկային գաղտնիք լինել, սահմանվում են օրենքով:
3. Ծառայողական, առեւտրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունը պաշտպանվում է սույն օրենքով եւ այլ օրենքներով նախատեսված եղանակներով:
4. Ծառայողական, առեւտրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունն ապօրինի եղանակներով ստացած անձինք պարտավոր են հատուցել պատճառված վնասները: Նման պարտականություն է դրվում նաեւ քաղաքացիական-իրավական կամ աշխատանքային պայմա-

նագրի խախտմամբ ծառայողական, առևտրային կամ բանկային տեղեկատվություն հրապարակած պայմանագիր կողմերի վրա:

Որո՞նք են այն երրորդ անձինք, որ հիշատակվում են հոդվածի 1-ին մասում:

Ըստ նույն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի՝

«Սույն օրենքի իմաստով երրորդ անձ են համարվում՝ բացի տվյալ բանկից եւ իր հաճախորդից, բոլոր այլ անձինք, ընդ որում Կենտրոնական բանկը, բանկերը եւ «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված վարկային կազմակերպությունները, Ավանդների հատուցման երաշխավորման հիմնադրամը «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում, երրորդ անձ չեն հանդիսանում»:

Կիրառելով անալոգիան պաշտպանության նույն ռեժիմի տակ գտնվող առևտրային եւ ծառայողական գաղտնիքի նկատմամբ եւ հաշվի առնելով ՀՀ քաղ.օր-ի 141 հ. 1-ին մասի պահանջները՝ երրորդ անձինք բոլոր անձինք են՝ բացի տեղեկությունների սեփականատիրոջից կամ բացի վերջինիցս ու բոլոր նրանցից, ովքեր այդ տեղեկություններին ծանոթացել են օրինական հիմքերով կամ վերջինիս հետ ունեցած պայմանագրային պարտավորությունների ուժով:

ՀՀ քր.օր-ը նախատեսել է հարցին վերաբերող հետևյալ հանցակազմը՝

**Հոդված 199.** Առևտրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկություն ապօրինի հավաքելը կամ հրապարակելը:

### 3. Մասնավոր կյանքին առնչվող տեղեկություններ

ՀՀ քր.օր-ով նախատեսած հարցին վերաբերող հանցակազմերը հետևյալն են՝

**Հոդված 144.** Անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը

**Հոդված 145.** Բժշկական գաղտնիքը հրապարակելը

**Հոդված 146.** Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունը խախտելը

**Հոդված 169.** Որդեգրման գաղտնիքը հրապարակելը:

Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգիրքը լայնացրել է այն տեղեկությունների ցանկը, որոնց հրապարակման համար քրեական պատասխանատվություն է նախատեսվում: Դրանք անհրաժեշտ է մտցնել մեր քրեական

օրենսդրության մեջ: Բացի որդեգրման գաղտնիքը հրապարակելու համար սահմանված քրեական պատասխանատվությունից, գոյություն ունեն հետևյալ հանցակազմերը:

**Հոդված 320.** Իրավապահ կամ ստուգող մարմնի պաշտոնատար անձի նկատմամբ իրականացվող անվտանգության միջոցառումների վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը:

**Հոդված 321.** Դատավորի եւ քրեական դատավարության մյուս մասնակիցների նկատմամբ իրականացվող անվտանգության միջոցառումների վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը:

«Սյուս մասնակիցներ» հասկացության տակ օրենքը դիտում է «դատական տեսուչին, հարկադիր կատարողին, տուժողին, վկային, քրեական դատավարության մյուս մասնակիցներին, ինչպես նաև նրանց մերձավորներին»: Որպես պարտադիր պայման է նախատեսվում այն, որ սուբյեկտին այդ տեղեկությունները վստահված են եղել կամ հայտնի դարձել նրա ծառայողական գործունեության կապակցությամբ: Սեղավոր կարող է ճանաչվել նաև հենց ինքը պաշտպանվողը, եթե՝ ըստ Մեկնաբանման, «դա ծանր հետևանքներ է առաջացրել այլ անձանց համար»:

Պարզապես հոդվածն անհրաժեշտ է լրացնել քաղաքացիական եւ հետազայում՝ նաև վարչական դատավարությունների մասնակիցներով: Նախաքննության եւ հետաքննության մասնակիցների նկատմամբ կիրառվող նույնանման միջոցառումների վերաբերյալ տեղեկությունները կազմում են նախաքննության եւ հետաքննության գաղտնիք:

### 4. Նախաքննության եւ հետաքննության գաղտնիք

Կցանկանայինք առանձնահատուկ կանգ առնել խոսքի ազատության, նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելու անթույլատրելիության հարցի վրա:

ՀՀ քր.օր-ի 342 հոդվածը նախատեսում է «Նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը», որտեղ նշվում է.

«Առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով»:

ՀՀ քր. օր.-ի 342 հոդվածի համաձայն, չի թույլատրվում նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակել առանց քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության: Օրենքի այս պահանջը վերաբերում է դատավարության այն մասնակիցներին, ովքեր տվյալ քրեական գործին մասնակցել են եւ որոշակի տեղեկություններ ունեն հավաքված ապացույցների եւ գործի այլ տվյալների վերաբերյալ: Քրեական գործով վարույթն իրականացնող անձը (դատախազը, քննիչը, հետաքննություն իրականացնող անձը) պետք է որոշի, թե որ քրեական գործի որ տվյալը կարելի է թույլատրել հրապարակման մինչեւ գործով մինչդատական վարույթի ավարտը: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ գոյություն ունեն տվյալներ, որոնց հրապարակումն ընդհանրապես անթույլատրելի է: Խոսքը վերաբերում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման միջոցներին, խուզարկությանը եւ առգրավմանը:

Համաձայն ՀՀ քր.դատ.օր.-ի 228 հոդվածի՝ «քննիչը պարտավոր է ձեռնարկել միջոցներ, որպեսզի չհրապարակվեն առգրավման եւ խուզարկության փաստը, ինչպես նաեւ դրանց արդյունքները եւ խուզարկվողի անձնական կյանքի հանգամանքները»:

Այսպիսով, ՀՀ քր. օրենսգրքի 342 հոդվածի դիսպոզիցիան վերլուծելիս՝ պետք է նկատի ունենալ նաեւ ՀՀ քր. դատ. օր.-ի 288 հոդվածի պահանջը: Իհարկե, ճիշտ կլիներ ընդհանրապես քր. օրենսգրքի 342 հոդվածի դիսպոզիցիան վերախթմագրել քր.դատ.օր.-ի 288 հոդվածի տեսանկյունից:

### Հարցեր լսարանին

1. Ձեր կարծիքով, արդյոք այս ցանկը կարիք ունի ավելացման կամ սահմանափակման:
2. Ի՞նչ առաջարկներ ունեք նշված ցանկի հետ կապված՝ այլ օրենքներում եւ մասնավորապես ՀՀ քրեական եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում փոփոխություններ կատարելու առումով:
3. Ձեր կարծիքով, կարո՞ղ են լինել դեպքեր, երբ անգամ այդ ցանկի մեջ մտնող տեղեկատվությունն անհրաժեշտ է գաղտնագրեթել: Եթե այո, ապա՝ ո՞ր դեպքերում: Դուք կարող եք ընտրություն կատարել հետեւյալ ցանկից՝
  - Հանցագործության կատարում
  - Կոռուպցիա
  - Վտանգ ազգային անվտանգությանը

- էկոլոգիական, առողջապահական եւ այլ տիպի անվտանգություն
- Ցանկացած այլ վտանգ, որը սպառնում է այն արժեքներին, որոնք պաշտպանվում են տեղեկատվության ազատության վերը նշված սահմանափակումներով

4. Ի՞նչ երաշխիքներ պետք է տրամադրվեն այն անձանց, որոնք սահազանգում են նշված 5 կետերով նախատեսված փաստերի մասին:

## 4.4. Ինչպե՞ս պատասխանել տեղեկատվության տրամադրման հարցումներին եւ ի՞նչ ժամկետներում

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը պարունակում է հստակ մեխանիզմներ՝ ուղղված տեղեկատվության ազատության իրավունքի իրականացմանը, որոնք կիրառելի են նաեւ մեր կողմից ուսումնասիրվելիք ոլորտում:

Պետք է նախ եւ առաջ նկատել, որ տեղեկատվության տրամադրման հարցումները, ըստ հայցվելիք տեղեկատվության բնույթի, ուղղված են կամ համապատասխան հիմնարկի ղեկավարին, (դատարանի նախագահ, դատախազ եւ այլն) կամ կոնկրետ գործի վարույթն իրականացնող մարմնին (քննիչ, դատական կազմ եւ այլն): Ամեն դեպքում, հարցն իր լուծումն է ստանում տեղեկատվության տրամադրման համար պատասխանատվություն կրող անձի կողմից՝ օրենսդրական վերը նշված աղբյուրների հիման վրա:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն հարցում է համարվում տեղեկություն փնտրելու եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմումը: Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

գրավոր հարցման մեջ նշվում է դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը: Գրավոր հարցմանը ներկայացվում է ստորագրված լինելու պահանջը (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը):

**9-րդ հոդվածի 5-րդ մասի** համաձայն բանավոր հարցմամբ դիմողը պարտավոր է նախապես հայտնել իր անունը եւ ազգանունը:



Տեղեկատվության տրամադրման գրավոր հարցումները պետք է գրանցվեն եւ պահվեն առանձին մատյաններում՝ դիմումներից առանձին: Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, գրավոր հարցումների գործավարությունն իրականացվում է քաղաքացիների դիմումների եւ բողոքների համար օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գործավարության մյուս ձեւերից առանձին:

**9-րդ հոդվածի 3-րդ մասի** համաձայն՝ գրավոր հարցմանը պատասխան չի տրվում, եթե՝

- 1) այն չի պարունակում վերը նշված բոլոր տվյալները,
- 2) պարզվում է, որ հեղինակի ինքնությանը վերաբերող տվյալները կեղծ են,
- 3) դա նույն անձի կողմից նույն տեղեկությունն ստանալու պահանջով վերջին 6 ամսվա ընթացքում ներկայացված երկրորդ դիմումն է, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի:

**9-րդ հոդվածի 4-րդ մասի** համաձայն՝ դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը, այսինքն՝ ներկայացնել այդ տեղեկատվության՝ իր համար անհրաժեշտ լինելը, ստանալու դեպքում՝ օգտագործման նպատակը, տեղեկատվությունը այլ տեղերից ստանալու անհնարինությունը եւ այլն:

**9-րդ հոդվածի 7-րդ մասի** համաձայն՝ գրավոր հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում.

- 1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, ընդ որում այս դեպքում, Օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն, հարցմամբ դիմողն իր ցանկությամբ կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով տեղում ծանոթանալ տեղեկությանը՝ հետ վերցնելով իր գրավոր հարցումը,
- 2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ **5-օրյա** ժամկետում.
- 3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

**9-րդ հոդվածի 8-րդ մասը** սահմանում է գրավոր հարցման պատասխանին տրվող ձեւը, որի համաձայն՝ պատասխանը տրվում է այդ հարցման մեջ նշված նյութական կրիչով: Եթե նյութական կրիչը նշված չէ, եւ դա անհնար է պարզել տվյալ հարցմանը սույն օրենքով սահմանված ժամկետում պատասխանելու համար, ապա գրավոր հարցման պատասխանը տրվում է տեղեկությունը տնօրինողին առավել ընդունելի նյութական կրիչով:

Ինչ վերաբերում է բանավոր հարցումներին, ապա այստեղ օրենսդիրը, մեր կարծիքով, իրավացիորեն որդեգրել է հակառակ մոտեցումը: Այսպես, եթե գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկությունը տրամադրելը օրենքով կանխավարկածվում է իբրեւ պարտականություն՝ նշելով կոնկրետ դրանից արվող բացառությունները, ապա բանավոր հարցման դեպքում սպառիչ նշվում են այն դեպքերը, երբ տվյալ հարցմանը պատասխանելը տեղեկատվությունը տնօրինողի պարտականությունն է:

**9-րդ հոդվածի 5-րդ մասի** համաձայն՝ բանավոր հարցման պատասխանը տրվում է, եթե՝

- 1) պահանջվող տեղեկության տրամադրումը կարող է կանխել պետական, հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը,
- 2) անհրաժեշտ է ճշտել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայության փաստը,
- 3) անհրաժեշտ է պարզաբանել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի կողմից գրավոր հարցումների քննարկման կարգը:

**9-րդ հոդվածի 6-րդ մասի** համաձայն՝ բանավոր հարցման պատասխանը տրվում է բանավոր՝ հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում: Եթե բանավոր հարցմամբ դիմողը չի հայտնում իր անունը եւ ազգանունը, եւ (կամ) բանավոր հարցումը չի համապատասխանում 9-րդ հոդվածի 5-րդ մասի վերը նշված երեք կետերով սահմանված պահանջներին, ապա տեղեկատվություն տնօրինողը կարող է չպատասխանել դրան:

**Տեղեկատվությանն ամբողջովին կամ մասամբ չտիրապետելու դեպքում համապատասխան պաշտոնատար անձը, որին ուղղված է դիմումը, դեռ կրում է տեղեկատվության ազատության իրավունքի իրականացմանը նպաստելու որոշակի պարտականություններ:**

**9-րդ հոդվածի 10-րդ մասի** համաձայն՝ եթե տեղեկատվություն տնօրինողը

չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը:

**9-րդ հոդվածի 11-րդ մասի** համաձայն՝ եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում գրավոր հարցման պատասխանում նշում է նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները:

Տեղեկությունների տրամադրման պայմանները սահմանված են Օրենքի 10-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների եւ կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրումն իրականացվում է ՀՀ կառավարության սահմանած կարգով:

## Հարցեր լսարանին



1. Ի՞նչ տեղեկատվություն պարտադիր կերպով պետք է հրապարակվի հանրային մարմինների, մասնավորապես՝ դատարանների եւ քրեական գործերով վարույթն իրականացնող մարմինները ներկայացնող այլ հիմնարկների կողմից:
2. Ի՞նչ տեղեկատվություն պարտադիր կերպով պետք է հրապարակվի քրեական եւ քաղաքացիական վարույթի գործերով:
3. Ինչպե՞ս վարվել այսպես կոչված «դժվար հարցումների» հետ: Արդյոք ցանկացած դիմող պետք է տեղյակ լինի տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման մեխանիզմների բոլոր մանրամասներին: Ինչպիսի՞ն կլինի Ձեր պատասխանը, երբ իրավաբանական առումով հարցումը թերի է:

## 4.5. Պե՞տք է արդյոք վճարել տեղեկության

## տրամադրման համար

Անհատների կողմից տեղեկատվության տրամադրման վերաբերյալ հարցումներ ներկայացնելուց խուսափելը չպետք է պայմանավորված լինի չափազանց մեծ տուրքերով: Այստեղ պետք է հստակ տարանջատել՝

1. բոլոր անձանց տրամադրվող տեղեկատվությունը,
2. միայն քրեական գործի կողմերին եւ գործին մասնակցող այլ անձանց տրվող տեղեկատվությունը:

1. Առաջին դեպքում գործում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, որի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային նշանակության կազմակերպություններն ինքնուրույն են որոշում տեղեկությունների տրամադրման համար գանձվող գումարի չափը, որը չի կարող գերազանցել այդ տեղեկության տրամադրման ծախսերը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված մարմինների՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների եւ կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում հետեւյալ դեպքերում.

- 1) բանավոր հարցումներին պատասխանելիս,
- 2) մինչեւ 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս,
- 3) տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս» («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3 կետեր):

Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում նաեւ, եթե տեղեկատվության հրապարակումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը: Փաստորեն, սրանք այն տեղեկություններն են, որոնց հրապարակման պարտականությունը սահմանված է օրենքով (տես՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մաս):

**10-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի** համաձայն՝ տեղեկության տրամադր-

ման համար գանձում չի կատարվում նաեւ տեղեկության տրամադրման ժամկետի փոփոխման մասին տեղեկություններ տրամադրելիս Օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետով նախատեսված դեպքում, մասնավորապես՝

«Եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը»:

Ըստ էության, սրանք այնպիսի տեղեկություններն են, որոնց տրամադրումը համապատասխան պաշտոնատար անձի պարտականությունն է արդեն օրենքի համաձայն:

**10-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի** համաձայն՝ տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում նաեւ տեղեկության տրամադրման ժամկետի փոփոխման մասին տեղեկություններ տրամադրելիս Օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքում, մասնավորապես՝

«Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը»:

Տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում նաեւ տեղեկության տրամադրումը մերժելիս: (տես՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մաս):

**10-րդ հոդվածի 4-րդ մասի** համաձայն՝ ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակող տեղեկություն տրամադրած մարմինը կամ կազմակերպությունն այդ տեղեկությունն ստացած անձի գրավոր հարցման հիման վրա պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով անվճար տրամադրել ճշգրտված տվյալներով տեղեկություն:

## Հարցեր լսարանին

1. Ի՞նչ օբյեկտիվ չափանիշներ, Ձեր կարծիքով, պետք է սահմանվեն



տեղեկատվություն տրամադրելու ծախսերը որոշելու համար:

2. Ինչպե՞ս սահմանազատել ինքնարժեքը եւ այլ ծախսերը:

3. Երկրորդ տիպի, այսինքն՝ միայն քրեական գործի կողմերին եւ գործին մասնակցող այլ անձանց տրվող տեղեկատվության տրամադրման համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի (ընդ. 27.12.1997թ.) 9-րդ հոդվածի 11-րդ եւ 12-րդ կետերը սահմանում են պետական տուրքի հետեւյալ չափերը՝

11. դատարանի վճռի, դատավճռի, դատարանի որոշման պատճենը (կրկնօրինակը) գործի քննությանը մասնակցող կողմերի կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար՝ բազային տուրքի<sup>13</sup> 50 տոկոսի եւ պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 15 տոկոսի չափով,

12. գործին մասնակցող անձանց հայցադիմումին կից փաստաթղթերի պատճենները գործի քննությանը մասնակցող կողմերի կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար՝ բազային տուրքի 20 տոկոսի եւ պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 10 տոկոսի չափով:

Ինչ վերաբերում է անձի իրավունքների, այդ թվում՝ տեղեկատվության ազատության իրավունքի դատական պաշտպանությունն իրականացնելիս գանձվող պետական տուրքերին, ապա դրանք կներկայացվեն սույն ուղեցույցի 4.8 կետում:

Այս երկրորդ տիպի տեղեկատվության տրամադրման դեպքում «Տեղեկատվության ազատության մասին» եւ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքների նորմերի մրցակցության մեջ հաղթում են վերջինիս նորմերը, քանի որ դրանք հատուկ նորմեր են հանդիսանում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի նորմերի նկատմամբ: Այսպես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը խոսում է ցանկացած տեղեկատվության (10-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը՝ միայն վերը նշված դատավարական փաստաթղթերի մասին:

## 4.6. Որո՞նք են տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերը

13. Նույն օրենքի 8-րդ հոդվածով «բազային տուրքի չափ է սահմանվում 1000 դրամը»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի («Տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերը եւ կարգը») համաձայն՝

1. Տեղեկության տրամադրումը մերժվում է սույն օրենքի 8-րդ հոդվածում սահմանված դեպքերում կամ այդ տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չվճարվելու դեպքում:
2. Տեղեկատվություն տնօրինողը կարող է չպատասխանել բանավոր հարցմանը, եթե տվյալ պահին դա խոչընդոտում է տեղեկատվություն տնօրինողի հիմնական պարտականությունների կատարմանը, բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:
3. Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաեւ դրա բողոքարկման կարգը:
4. Տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան:

### Հարցեր լսարանին

1. Արդյո՞ք այս ցանկը սպառիչ է:



2. Ի՞նչ առաջարկություններ ունեք նշված հիմքերն ավելի մանրամասնելու ուղղությամբ:

3. Յուրաքանչյուր դեպքի համար բերեք մեկական օրինակ:

## 4.7 Տեղեկատվության իրավունքի խախտման բողոքարկումը

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ, եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածն արդեն նախատեսում է «Արդար դատաքննության իրավունքը»՝ սահմանելով հետեւյալը՝

Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած

քրեական մեղադրանքը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի եւ հրապարակային դատաքննության իրավունք: Դատարանի որոշումը հայտարարվում է հրապարակավ, սակայն մամուլի ներկայացուցիչների եւ հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ եւ 13-րդ հոդվածները միմյանց հարաբերվում են իբրեւ, համապատասխանաբար, հատուկ եւ ընդհանուր տիպի իրավական նորմեր:

ՀՀ Սահմանադրության 38 հոդվածը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները եւ ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք»:

Յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրված իր իրավունքների ազատությունների դատական պաշտպանության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 39 հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաեւ իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք: Հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, կողմերի անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվության միջոցների եւ հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննության ընթացքում կամ նրա մի մասում կարող է արգելվել օրենքով:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազոր-

ված պետական կառավարման մարմին կամ դատարան»:

Նշված բողոքները դատարանի կողմից քննվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի կանոններով: Համապատասխան քաղվածքները գետեղված են սույն ուղեցույցի 2-րդ հավելվածում:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի (ընդ. 27.12.1997թ.) 9-րդ հոդվածի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հատուկ վարույթի գործերի վերաբերյալ դիմումների համար սահմանված է բազային տուրքի եռապատիկը (3.000 դրամ): Նույն հոդվածի 8-րդ կետի համաձայն դատարանի վճիռների եւ որոշումների դեմ հատուկ վարույթի գործերով բերվող վերաքննիչ բողոքների համար սահմանված է բազային տուրքի ութապատիկը (8.000 դրամ): Նույն հոդվածի 9-րդ կետի համաձայն դատարանի վճիռների եւ որոշումների դեմ հատուկ վարույթի գործերով բերվող վճռաբեկ բողոքների համար սահմանված է բազային տուրքի տասնապատիկը (10.000 դրամ):

## 4.8 Պատասխանատվություն տեղեկատվության ազատության իրավունքի խախտման համար

Տեղեկատվության ազատության իրավունքը երաշխավորվում է նախ եւ առաջ նրա խախտումների համար քրեական պատասխանատվության սահմանմամբ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը սահմանում է, որ «բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, տեղեկություն տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելը, ինչպես նաեւ սույն օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն: Սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկության հրապարակումը չի կարող առաջացնել վարչական կամ քրեական պատասխանատվություն»:

ՀՀ նոր քրեական օրենսգրքը (ընդ. 18.04.2003թ.) նախատեսում է մի շարք հանցակազմեր, որոնց հիմքում ընկած է տեղեկություններ թաքցնելու հանրորեն վտանգավոր համարվող արարքը: Մասնավորապես՝

\* Խոսքը վերաբերում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները հրապարակելուն, որը հատուկ սուբյեկտ է նախատեսում՝ գործին մասնակցող անձ, որին քննիչը կամ հետաքննություն իրականացնող անձը տեղյակ են պահել նշված տվյալները հրապարակելու անթույլատրելիության մասին եւ որոնցից այդ մասին վերցվել է ստորագրություն:

## Հոդված 148. Անձին տեղեկություն ներկայացնելուց հրաժարվելը

Անձին՝ անմիջականորեն նրա իրավունքներն ու օրինական շահերը շոշափող եւ սահմանված կարգով հավաքված փաստաթղթերը կամ նյութերը ներկայացնելուց պաշտոնատար անձի կողմից ապօրինի հրաժարվելը կամ անձին այդպիսի տեղեկությունը ոչ լրիվ կամ դիտավորյալ աղավաղված ներկայացնելը, եթե դա տվյալ անձի իրավունքներին եւ օրինական շահերին վնաս է պատճառել՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

## Հոդված 164. Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը

1. Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը կամ նրան տեղեկություններ տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրհիսնապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք կատարել է պաշտոնատար անձն իր պաշտոնական դիրքն օգտագործելով՝

պատժվում են ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Քննարկվող ոլորտին վերաբերող ՀՀ քր.օր-ով նախատեսված մյուս հանցակազմերը հետեւյալն են՝

## Հոդված 254. Համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը

## Հոդված 278. Մարդկանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հանգամանքների վերաբերյալ տեղեկություն թաքցնելը

## Հոդված 282. Շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկություններ թաքցնելը կամ դրանք դիտավորյալ աղավաղելը

## Հոդված 192. Անօրինական գործողությունները սնանկության ընթացքում:

Թվարկված, ինչպես նաև ԶԳ քրեական օրենսգրքի՝ սույն ուղեցույցում հիշատակվող այլ հոդվածների տեքստերը զետեղված են սույն ուղեցույցի 2-րդ հավելվածում:

2003թ. դեկտեմբերի 1-ին ընդունված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ԶԳ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ԶԳ օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով»:

«Տեղեկատվության ազատության մասին» ԶԳ օրենքը թեև սահմանում է հրապարակման ոչ ենթակա տեղեկությունները, սակայն միաժամանակ պաշտպանության տակ է առնում գաղտնիք պարունակող տեղեկատվության արտահոսք թույլ տված պաշտոնյաներին եւ բացառում է նրանց վարչական կամ քրեական պատասխանատվությունը, եթե այդ տեղեկատվության հրապարակմամբ կարող են կանխվել հասարակությանը սպառնացող վտանգը, մարդկանց անվտանգությանն ու առողջությանը, շրջակա միջավայրին սպառնացող աղետները, մի խոսքով՝ գաղտնիքի հրապարակումն օգուտ է բերում հասարակությանը: Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ԶԳ օրենքի 14 հոդվածի 2-րդ մասի՝ 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված տեղեկությունների հրապարակումը չի կարող առաջացնել վարչական կամ քրեական պատասխանատվություն: Ղա այն տեղեկությունն է, որը՝

1) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաև տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին եւ դրանց հետեւանքներին.

2) ներկայացնում է ԶԳ տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության,


կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը.

3) չտրամադրումը բացասական ազդեցություն կունենա ԶԳ սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

Նշված անձանց, ահազանգ հնչեցնողների պաշտպանությունը կարելի է նաև հետևյալ երկու տեսանկյունից՝

- ա) նրանք առավել տեղեկացված են այն մասին, թե ինչ է տեղի ունենում իրենց հիմնարկության ներսում,
- բ) նրանք առավել պրոֆեսիոնալ են ահազանգման կարիքը գնահատելիս,
- գ) հաճախ այդ ահազանգը հանրությանը տեղյակ պահելու միակ օրինական միջոցն է:

## Հարցեր լսարանին

 1. Ի՞նչ օրինակներ կարող եք բերել այս կամ այն պետական հիմնարկի գործունեությունից, որոնք կարող են արդարացնել ահազանգ հնչեցնողի կողմից հանրությանն ամբողջ ճշմարտությունը հաղորդելու փաստը:

- 2. Արդյոք ներքին կարգապահության (ծառայության) կանոնները կարող են խոչընդոտել ահազանգ հնչեցնելուն, եթե դրանով պաշտպանվում են ավելի մեծ շահեր:
- 3. Արդյոք վերը նշված հիմքերը սպառնիչ պետք է լինեն, թե՞ ոչ:
- 4. Ի՞նչ միջոցներ կառաջարկեք ահազանգ հնչեցնողների պաշտպանության համար:
- 5. Ի՞նչ զուգահեռներ կան ընդհանրապես վկաների եւ ահազանգ հնչեցնողների պաշտպանության իրավական ռեժիմներում:
- 6. Արդյոք հակասություն կա ԶԳ այլ օրենքների եւ իրավական ակտերի ու «Տեղեկատվության ազատության մասին» ԶԳ օրենքի՝ ահազանգ հնչեցնողների պաշտպանության վերաբերյալ նորմերի միջև:

## ՀԱՎԵԼՎԱԾ 1.

**ԶԳ դատական նախադեպային իրավունքը տեղեկատվության ազատության**

**իրավունքի դատական պաշտպանության ոլորտում**

**ՂԱՏԱԿԵՒ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

«11» հոկտեմբերի 2004թ. քաղ. Յրագրան

Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանը կազմով՝	
Նախագահող դատավոր՝	Ն. ՊՈՂՈՍՅԱՆ
Մասնակցությամբ՝ քարտուղար՝	Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Մեղադրող՝	Կ. ՓԻԼՈՅԱՆ
Տուժող՝	Ա. Ի.
Տուժողների ներկայացուցիչ՝	Ռ. Մ.

Դռնբաց դատական նիստում քննեց գործն ըստ մեղադրանքի՝

Գ.Ս-ի՝ ծնված 1961թ., ք. Երեւան, հայ, ՀՀ քաղաքացի, միջն. կրթությամբ, ամուսնացած, խնամքին երեք անձ, նախկինում դատված

- 10.11.1995թ. Երեւանի Խորհրդային շրջ. ժող. դատարանի կողմից ՀՀ քր.օր. 229 հոդ. 3-րդ եւ 232 հոդ. 2-րդ մ., ազատազրկման 1 տարի ժամանակով:
- 24.09.1997թ. նույն դատարանի դատավճռով ՀՀ քր.օր-ի 229 հոդ. 4-րդ մասով եւ 232 հոդ. 1-ին մասով ազատազրկման 3 տարի ժամանակով, դատվածությունը մարված, չի աշխատում, ֆիզ. առողջ, բնակվել է...: Մեղադրվում է ՀՀ քր.օր-ի 164 հոդ. 1-ին եւ 258 հոդ. 1-ին մասերով նախատեսված հանցանքի կատարման համար: Խափանման միջոց է ընտրվել կալանքը: Կալանքի տակ է 26.08.2004թ. եւ

**ՊԱՐՁԵՑ**

24.08.2004թ. ամտառի մասին ռեպորտաժ պատրաստելու նպատակով

«Առավոտ» օրաթերթի թղթակից Ա.Ի-ն եւ «Ֆոտոլուր» գործակալության թղթակից Մ.Խ-ն մեկնել են Ծաղկածոր: Գրողների ստեղծագործական տան տնօրենի «Նիվա» մականիշի 609 SL 42 պետհամարանիշի ավտոմեքենայով, որը վարում էր վարորդ Ա.Գ-ն, Ի-ն, Խ-ն եւ Գ.Պ-ն մեկնել են նկարահանումների: Ժ. 12-30-ի սահմաններում հասել են Ծաղկածորի մարզահամալիրին հարակից տարածք, որտեղ կառուցված են եղել երեք առանձնատներ եւ ընթացակալի են եղել շին. աշխատանքներ: Դրանք նկարահանելու նպատակով մեքենան կանգնեցրել են եւ լուսանկարիչ Մ-ն իջնելով մեքենայից սկսել է նկարահանումներ կատարել: Այդ պահին առանձնատներից մեկի պահակատնից նրան է մոտեցել Լ.Հ-ն, որն այդ պահին փոխարինում էր հորը՝ հիմնական պահակ Հ.Հ-ին եւ արգելել այդպեղ նկարահանումներ կատարել: Չնայած դրան Մ-ն կատարել է նկարահանումը, որից հետո մեքենայով նրանք հեռացել են այդտեղից: Լ.Հ-ն նկարահանումների մասին հեռախոսազանգով տեղյակ է պահել իր հորը, նշելով, որ նկարողները եղել են Գրողների տանը պատկանող «Նիվա» ավտոմեքենայով: Հայրը նրան ասել է, որ գնա Գրողների տուն, ուր կգա նաեւ ինքը, ճշտելով, թե ովքեր են եղել նկարահանողները եւ ինչ նպատակով են նկարել: Լրագրողների գնալուց քիչ անց Լ.Հ-ին է մոտեցել Գ.Ս-ն եւ նրան հարցրել «Նիվա» մականիշի մեքենայով եկած նկարահանող անձանց մասին, ինչին Լ.Հ-ն պատասխանել է, որ «Նիվան» Գրողների տան մեքենան է, բայց նկարողներին չի ճանաչում, որից հետո Ս-ն հեռացել է: Լ.Հ-ն գնացել է Գրողների տուն՝ ըստ հոր հետ ունեցած պայմանավորվածության եւ այնտեղ կրկին հանդիպել Ս-ին, վերջինս խնդրել է ցույց տալ նկարողներին եւ նրանց տեղափոխող վարորդին: Ժ. 13-ի սահմաններում մտնելով Գրողների տան նախասրահ, Լ.Հ-ն մուտքի մոտ տեսել է Գ.Ս-ին ասել է, որ նա է եղել նկարողը, ցույց տալով Մ.Խ-ին եւ Ա.Գ-ին: Ս-ն վերջինիս կանչել է, տարել Գրողների տան տնօրենի աշխատասենյակ եւ պահանջել, որ Ա-ն ցույց տա նկարահանողներին: Այնուհետեւ դուրս գալով տնօրենի աշխատասենյակից Ա.Գ-ն եւ Լ.Հ-ն մատնացույց են արել նախասրահում հանգստացող Ա.Ի-ին, Մ.Խ-ին եւ Գ.Պ-ին, որից հետո Գ.Ս-ն մոտեցել է նստած Մ.Խ-ին եւ Ա.Ի-ին: Հաստատապես իմանալով, որ նրանք լրագրողներ են, դրսևորելով բացահայտ անհարգալից վերաբերմունք նախասրահում գտնվողների նկատմամբ Ս-ն տվել է խուլիգանական հայհոյանքներ լրագրողների հասցեին եւ վերցնելով Մ.Խ-ի կողքին դրված ֆոտոօբյեկտիվը, սպառնացել է, որ այն կջարդի, եթե իրեն չտա լուսանկարչական ապարատի ֆոտոժապավենը: Խ-ն նրան ասել է, որ ապարատը ժապավեն չունի, այլ «չիպ»-ի հիշողության մեջ են դրանք եւ պատրաստակամություն է հայտնել այնտեղից ջնջել նրան հետաքրքրող կադրերը: Չնայած դրան Ս-ն խախտելով հասարակական կարգը եւ շարունակելով հայհոյանքներ տալ, սկսել է քաշքշել Մ.Խ-ին, ձեռքով հարվածել նրան, որի հետեւանքով վերջինիս առողջությամբ

ընդ պատճառով էլ թեթև վնաս: Հանգստյան տան տնօրեն Ս-ի միջամտելուց հետո, այնուամենայնիվ Մ.Խ-ից Գ.Ս-ն վերցրել է չիպը եւ հայիոյանքներ տալով եւ ասելով, թէ դրա արժեքը կվճարի հեռացել է այդտեղից:

ՀՀ քր.օր.-ի 164 հոդ. 1-ին եւ 258 հոդ. 1-ին մասերով առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Ս-ն իրեն մասնակիորեն մեղավոր ճանաչեց եւ հայտնեց հետեւյալը.

24.08.2004թ. ժամը 13-ի սահմաններում ինքը իր ընկերուհու հետ եղել է Ծաղկածորի մարզահամալիրի տարածքում եւ երբ իրենք գրկախառնված են եղել, ընկերուհին ասել է, որ ինչ-որ մարդիկ իրենց նկարեցին ավտոմեքենայի միջից եւ մատնացույց է արել նիվա մակնիշի մեքենա: Ինքը մոտեցել է առանձնատներիցմեկի պահակին եւ հարցնելով եւ նրանցից իմանալով, որ այդ մեքենան Գրողների տան մեքենան է, գնացել է այնտեղ՝ պարզելու, թե ինչու են իրենց նկարահանել: Գրողների տան մուտքի մոտ հանդիպել է վերը նշված պահակին, որը ցույց է տվել «Նիվա» մակնիշի մեքենայի վարորդին, որն էլ իր հերթին ցույց տալով նախասրահում գտնվող մի կնոջ եւ երկու տղամարդու, ասել է, որ նրանք են եղել նկարահանումներ կատարողները: Ինքը մոտեցել է նախասրահում նստած տղամարդուն, առաջարկել դուրս գալ, առանձին զրուցելու, վերջինս հրաժարվել է, որից զայրացած ինքը քաշքշել է նրան, պահանջել ժապավենը՝ չցանկանալով տհաճ խոսակցության մեջ զցել իր ընկերուհուն: Այդ ժամանակ ինքն ու Խ-ն գնացել են տնօրենի աշխատասենյակ, որտեղ նկարիչն իրեն ասել է, որ ապարատը ժապավենով չէ, այլ չիպով է, որն էլ ինքը նրանցից վերցրել ու դուրս է եկել այնտեղից: Ինքը ոչ ոքի չի հայիոյել, այլ միայն կոպիտ խոսքեր կարող է ասած լինի, ոչ ոքի չի հարվածել, սակայն հնարավոր է, որ քաշքշուկի ժամանակ Խ-ի վրա վնասվածքներ առաջացած լինի: Ընդհանրապես որեւէ մեկի առանձնատան, այն նկարելու մասին ինքը տեղյակ չի եղել եւ ոչինչ չի հարցրել այդ մասին, իրեն միայն իր եւ իր ընկերուհու նկարն է հետաքրքրել: Ինքը իրեն մասնակի է մեղավոր ճանաչում՝ միայն այն բանի համար, որ կոպիտ է վարվել ֆոտոնկարիչի հետ: Նա միաժամանակ հայտնեց, որ հետո է իմացել, որ նրանք լրագրողներ են: Գրողների տնից դուրս գալու ժամանակ ինքը հավաքվածներից ներողություն է խնդրել ու վերցնելով չիպը հեռացել, որը ճանապարհին դնել է նետել: Դրա արժեքը ինքը նախաքննության ժամանակ հատուցել է /տես դատական նիստի արձանագրությունը/:

Դատարանը հետազոտելով գործով ձեռք բերված ապացույցները, վերլուծության եւ գնահատության ենթարկելով դրանք՝ իրենց համակցությամբ, հանգում է այն հետեւության, որ առաջադրված մեղադրանքում Գ.Ս-ի կողմից իրեն մասնակի մեղավոր ճանաչելը պատասխանատվությունից խուսա-

փելու նպատակ է հետապնդում, եւ նրա կողմից կատարված հանցանքը բացի իր խոստովանական ցուցմունքից, հիմնավորվեց նաեւ դատաքննությանը ձեռք բերված հետեւյալ ապացույցներով.

Դատաքննությամբ հարցաքննված տուժող Ա.Ի-ի ցուցմունքով այն մասին, որ բնապահպանական թեմայով լրատվական ռեպորտաժ պատրաստելու նպատակով «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագրի հանձնարարությամբ 24.08.2004թ. առավոտյան ինքը, նկարիչ Մ.Խ-ն եւ Գ.Պ-ն իրենց խմբագրության ՎԱԶ-2106 մակնիշի մեքենայով մեկնել են ք. Ծաղկածոր: Գրողների ստեղծագործական տան տնօրենի խորհրդով փոխել են մեքենան եւ գնացել են նրա «Նիվա» մակնիշի մեքենայով, որը վարել է Ա.Գ-ն: Հասնելով մարզաբազայի տարածքը՝ Ս-ն իջել է մեքենայից եւ սկսել նկարահանումներ կատարել: Այդ ընթացքում իրենք երեքով մնացել են մեքենայի մեջ, քիչ անց նկատել են, որ Ս-ին է մոտեցել մի երիտասարդ, որը ձեռքը զցելով ֆոտոպարատին խոչընդոտել է նկարահանումները: Նրանց խոսակցությունը ինքը չի լսել, սակայն երբ Ս-ն հասել է մեքենային այդ տղամարդը մոտեցել է եւ իմանալով, որ Գրողների տուն են գնում, ասել է, որ ինքը կգանգի, բայց, թե ում չի ասել: Ճանապարհին նրանք կրկին հանդիպել են նրան, որն ասել է, որ գնացեք, հիմա գալիս ենք: Երբ հասել են Գրողների տուն, ժամը 13-ն էր արդեն, փորձել են սրահում նստել, հանգստանալ, ինքը ապահովության համար Մ-ից վերցրել է ֆոտոխցիկը եւ դրել իր պայուսակում: Այդ ժամանակ իրենց է մոտեցել մարզաբազայում իրենց տեսած երիտասարդը երեք տղամարդկանց հետ: Նրանցից մինչ այդ իրեն անծանոթ Գ.Ս-ն մոտեցել է իրենց եւ հարցրել. «ով եք, արա»: Տեղեկանալով, որ լրագրողներ են եւ վերցնելով իրենց մոտ բազկաթռչին դրված ֆոտոօբյեկտիվը, ասել է, որ կջարդի այն:

Ս-ն նրան ասել է, որ վերադարձնի օբյեկտիվը եւ եթե նկարված կադրերից ինչ որ մեկը նրան դուր չի գա, ապա ինքը կջնջի նրա պահանջած կադրը: Երբ ինքը պայուսակից հանել է ֆոտոխցիկը, Գ.Ս-ն այն խլել է, ու Ս-ի թեւից քաշելով պահանջել դուրս գալ սրահից՝ ասելով, թե արի դուրս գնանք, տեսնենք թե ում տունն ես նկարել: Այդ ընթացքում, շուրջ 5-10 րոպե նա քաշքշել է Ս-ին, հարվածել ծոծրակին՝ գլխի մասում, տվել խուլիգանական հայիոյանքներ, նշելով մասնավորապես. «քո ժուռնալիստ...», ինչը հիմնավորում է, որ նա հաստատապես իմացել է իրենց լրագրող լինելու մասին: Դրանից հետո հանգստյան տան տնօրեն Մ.Ս-ն միջամտել է վեճին ու նրանք գնացել են տնօրենի աշխատասենյակ: Շուրջ 5 րոպե անց դուրս են եկել այդտեղից ու Գ.Ս-ն դիմելով իրեն ասել է. «Ձեր լրագրողը թող լավ հիշի իր նկարած վերջին կադրը» ու ներողություն խնդրելով սրահում գտնվող գրականագետ Ա.Ե-ից հեռացել: Մինչ այդ Խ-ն խնդրել է վերադարձնել չիպը՝ ասելով, որ այն 250 ԱՄՆ դոլոր արժի, բայց նա չի տվել, այն վերցրել ու տարել է իր հետ: Ին-



քը ամբաստանյալից նյութական պահանջ չունի եւ խնդրում է դատարանին օրենքի ողջ խստությամբ պատժել նրան: Ի-ն միաժամանակ մեք, որ ինքը կարող է ներել ամբաստանյալին միայն այն դեպքում, եթե նա ասի, թե ում պատվերով է նման արաք կատարել եւ ում տունը նկատի ուներ (տես դատական միստ արձանագրությունը): Դատաքննությամբ հարցաքննված վկա Գ.Պ-ի տված Ա.Ի-ի վերը նշված ցուցմունքին նույնաբովանդակ ցուցմունքով (տես դատական միստի արձանագրությունը):

Վկա Մ.Ս-ի ցուցմունքով այն մասին, որ 24.08.2004թ. Ա.Ի-ի Մ.Խ-ի խնդրանքով նրանց է տրամադրել Գրողների տան Նիվա մակնիշի մեքենան, որի վարորդը Ա.Գ-ն է: Ժամը 12-13-ի սահմաններում իր աշխատասենյակում Ա.Ե-ի հետ նստած են եղել, երբ ներս են մտել Ա-ն իրեն մինչ այդ անծանոթ մի տղամարդու հետ, որը ինչպես հետո իմացել է Գ.Ս-ն էր: Վերջինս Ա-ից պահանջում էր, որ ցույց տա լրագրողներին՝ ասելով, թե ինչու են նկատել ինչ-որ մեկի տունը, սակայն անվանական չէր մշում, թե ում տունն է նկատի ունի: Նա եղել է շատ բորբոքված վիճակում եւ իմանալով, որ լրագրողները սրահում են, դուրս է եկել եւ հայիոյանքներ տալով Մ-ից պահանջել ժապավենը՝ քաշքշելով նրան շուրջ 5 րոպե խանգարելով հանգստացողների հանգիստը: Ինքը նրանց իր աշխատասենյակ է տարել, որտեղ Գ-ն նորից քաշքշել, հարվածել եւ հայիոյել է Մ-ին: Այդտեղ վերջինս առաջարկել է ջնջել Մ-ի պահանջած ցանկացած կադրը, սակայն նա վերցրել է չիպը ու հեռացել այդտեղից (տես դատական միստի արձանագրությունը):

Վկա Լ.Յ-ի ցուցմունքով այն մասին, որ իր հայրը պահակ է աշխատում մարզահամալիրին հարող տարածքում, 24.08.2004թ. ինքը գնացել է հորը փոխարինելու, քանի որ վերջինս պետք է բժշկի գնար: Ժամը 12-ի մոտերքը ինքը նկատել է, որ Գրողների տան Նիվա մակնիշի մեքենայով ինչ-որ մարդիկ եկել են եւ նրանցից մեկը նկարահանումներ է կատարում: Ինքը մոտեցել է վարորդ Ա-ին, որին ճանաչում էր եւ հարցրել, թե որտեղ են դրանք հանգստանում, եւ ճշտելով, որ Գրողների տանը, նրանց գնալուց հետո զանգել է հորը եւ հանդիպել է Գ.Ս-ին, որը ինչ-որ բանից զայրացած է եղել եւ իրեն առաջարկել է, որ նկարողներին ցույց տա: Ինքը ցույց է տվել սրահում նստած լրագրողներին: Գ-ն մոտեցել է նրանց, որից հետո նրանք միասին մտել են տնօրենի սենյակը: Դուրս գալուց հետո Ս-ն մոտեցել է լրագրողներին եւ պահանջել ժապավենը: Ֆոտոնկարիչը ասել է, որ իրենք լրագրողներ են եւ որ այդ ապարատը ժապավենով չէ: Դրանից Գ-ն բորբոքվել է եւ քաշքշել է նկարչին, բայց ինքը չի տեսել, որ նրան հարվածել է, եւ հայիոյանքներ եւս չի լսել: Դրանից հետո նրանք նորից մտել են տնօրենի սենյակ եւ դուրս գալուց հետո Գ-ն ասել է, որ ինչ-որ բան է նրանցից վերցրել ու թողել գնացել (տես դատական միստի արձանագրությունը): Դատաքննությամբ հրապարակված տուժող Մ.Խ-ի, վկաներ Ա.Ե-ի, Ժ.Բ-ի ցուցմունքներով, դատաքննության փորձագետի թիվ 1285 եղրակացությամբ, առերեսման, անծի ճանաչման արձանագրություններով (գ.թ. 29-31, 23-25, 127-128, 35, 84, 89, 99, 101) եւ քր. գործի ողջ տվյալներով:

Այսպիսով Գ.Ս-ն կատարել է 33 քր.օր-ի 164 հոդ. 1-ին եւ 258 հոդ. 1-ին մասերով նախատեսված արարք, ենթակա է պատժի իր կատարածի համար եւ պետք կրի իր նկատմամբ նշանակված պատիժը:

Պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ինչպես արարքի հասարակայնորեն վտանգավորության աստիճանը, այնպես էլ ամբաստանյալի անձը, եւ այն, որ մասնակի զղջաց կատարածի համար: Միաժամանակ դատարանը գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանքը, պետք է թողնել անփոփոխ մինչեւ դատավճռի օրինական ուժի մեք մտնելը: Քանի որ տուժողները քաղ. հայցի պահանջ չենրկայացրին, հարցը համարել լուծված: Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով 33 քր. դատ. օր-ի 360, 369-372 հհ-ով դատարանը

#### ՎճՈՒՅ

Գ.Ս-ին մեղավոր ճանաչել 33 քր. օր-ի 164 հոդ. 1-ին եւ 258 հոդ. 1-ին մասերով:

33 քր.օր-ի 164 հոդ. 1-ի մասով դատապարտել ուղղիչ աշխատանքների 6 (վեց) ամիս ժամանակով՝ վաստակի 10%-ի պահումով պետության օգտին:

33 քր.օր-ի 258 հոդ. 1-ին մասով դատապարտել ազատազրկման 6 (վեց) ամիս ժամանակով:

33 քր.օր-ի 66 հոդ. 2-իդ մասի կարգով նվազ խիստ պատիժն ավելի խիստ պատժով կլանելու միջոցով վերջնական պատիժ սահմանել ազատազրկում 6 (վեց) ամիս ժամանակով, որը պետք է կրի 33 ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկությունում:

Ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանքը, թողնել անփոփոխ մինչեւ դատավճռի օրինական ուժի մեք մտնելը: Կալանքի սկիզբը հաշվել 26.08.2004թ.:

Դատավճիռը կարող է բողոքարկվել 33 քր. եւ զին. գործերով Վերաքննիչ դատարանին 15-օրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ

#### ՎճԻՐ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին  
ատյանի դատարանը

**Նախագահությանը դատավոր՝** Ս. Արամյանի

**Քարտուղարությանը՝** Ս. Ավագյանի

**Մասնակցությանը՝**

դիմող՝ Է. Բաղդասարյանի

դիմողի ներկայացուցիչ՝ Կ. Մեժլումյանի

պատասխանողի ներկայացուցիչ՝ Ա. Համբարձումյանի

2003թ. մայիսի 16-ին

Պեճաբ գատական նիստում, դատարանում քննեց քաղ. գործն ըստ դիմումի «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ Բնապահպանության նախարարության՝ պաշտոնատար անձի անգործությունը վիճարկելու մասին:

Դատաքննության ընթացքում կողմերը դատարանին ներկայացրին հաշտության համաձայնություն եւ խնդրեցին այն հաստատել:

Ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ.օր.-ի 109հոդ. 7-րդ կետով, 130-133 հոդվածներով, դատարանը

**ՎճՈՒՑ**

Հաստատել կողմերի միջեւ 16.05.2003թ կնքված հաշտության համաձայնությունը հետեւյալ տեքստով.

«Թիվ 2-2666 քաղ. գործով դիմող «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ-ն, ի դեմս նախագահ Էդ. Բաղդասարյանի եւ պատասխանող ՀՀ Բնապահպանության նախարարությունն ի դեմս ներկայացուցիչ Ա. Համբարձումյանի, ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օր.-ի 33, 109, 110 եւ 133 հոդվածներով եւ ի գիտություն ընդունելով պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձեր «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Էյ-Սի-Փի» ՓԲԸ) գործադիր տնօրեն Գ. Արզումանյանի 7.05. 2003թ. թիվ Գա-052 գրությունը,

- «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի ներկայացուցչի բացատրություն առ այն, որ փաստաթղթերի ամբողջական լինելու դեպքում պատրաստ են տալ փորձագիտական եզրակացություն,
- Երրորդ անձերի միջեւ 06.05.02թ.-ին կնքված թիվ 48 պայմանագիրը,

կնքում ենք սույն հաշտության համաձայնությունը հետեւյալի մասին՝

1. ՀՀ Բնապահպանության նախարարությունը պարտավորվում է «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ի 07.05.03թ գրությունում նշված փաստաթղթերը ստանալուց հետո ութսուն օրյա ժամկետում ավարտել փորձաքննության գործընթացը եւ տալ համապատասխան եզրակացություն՝ դրա օրինակը տրամադրելով «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ-ին:

Հաշտության համաձայնության պայմանով «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ-ն հրաժարվում է դիմումից (հայցից)»:

**ՎՃԻՌ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի  
դատարանը հետեւյալ կազմով՝

ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՄՔ՝ ԴԱՏԱՎՈՐ Վ. Լալայանի

ՔԱՐՏՈՒԴԱՐՈՒԹՅԱՄՔ՝ Ս. Բալաբեկյանի

Մասնակցությանը՝ դիմողի ներկայացուցիչներ՝ Է. Բաղդասարյանի

Կ. Մեժլումյանի

պատասխանողի ներկայացուցիչ՝ Գ. Ներսիսյանի

2001թ. դեկտեմբերի 18-ին դատարանում դռնբաց դատական նիստում քննեց քաղ. գործն ըստ դիմումի «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահ Արմեն Ավետիսյանի՝ պաշտոնատար անձի գործողությունները /անգործությունը/ վիճարկելու եւ սպառիչ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին.

Դատաքննությանը դատարանը պարզեց հետեւյալը.

Դիմումատուն, դիմելով դատարան, հայտնել է, որ 09.10.01թ. «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ նախագահ Է. Բաղդասարյանը գրավոր դիմել է ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահ Ա. Ավետիսյանին, խնդրելով տեղեկություններ տրամադրել հետեւյալ հարցերի մասին.

1. Ոչ մետաղական հանքավայրերը շահագործող ո՞ր կազմակերպություններն են արտահանում իրենց արտադրանքը:

2. 1997թ.-ից առ այսօր այդ կազմակերպությունները որքան արտադրանք (քար) են արտահանել:

3. 1997թ.-ից առ այսօր արտադրանքի այդ տեսակներն արտահանելուց ինչքան տուրք է վճարվել:

24.10.01թ. ստացվել է նույն կոմիտեի նախագահի տեղակալ Ս. Թադևոսյանի գրությունը, որով հղում կատարելով ՀՀ մաքսային օրենսգրքի հոդված 16-ին հրաժարվել է պատասխանել առաջադրված հարցերին:

ՀՀ Սահմանադրության 24 հ. համաձայն յուրաքանչյուր ոք ունի տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու իրավունք:

«Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 19 հ. համաձայն յուրաքանչյուր ոք ունի տեղեկություն փնտրելու, ստանալու եւ տարածելու իրավունք:

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ հ. համաձայն յուրաքանչյուր ոք ունի տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու իրավունք:

«Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի 19 հ. համաձայն յուրաքանչյուր ոք ունի ցանկացած տեսակի տեղեկություն փնտրելու, ստանալու եւ տարածելու իրավունք:

Եվ վերջապես «Մամուլը եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների» մասին ՀՀ օրենքի 4-րդ համաձայն «Մամուլը եւ զանգվածային լրատվության մյուս միջոցները իրավունք ունեն պետական մարմիններից... դրանց ղեկավարներից ստանալու տեղեկություններ, եթե պահանջված լրատվության տրամադրումը չի հակասում տվյալ կազմակերպության կանոնադրությանը եւ սույն օրենքի 6 հոդվածի պահանջներին», իսկ 27 հ. համաձայն «Լրագրողն իրավունք ունի հավաքել եւ հրատարակել լուրեր եւ տեղեկություններ», «Արգելվում է խանգարել լրագրողներին մասնագիտական պարտականությունները կատարելիս»:

Յուրաքանչյուրի եւ հատկապես լրագրողի, տվյալ դեպքում Է. Բաղդասարյանի տեղեկություններ ստանալու իրավունքը խախտված է այլոց, այդ թվում եւ առաջին հերթին պետական մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց տեղեկություններ տրամադրելու պարտավորությամբ վրա:

Տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն այն դեպքում, եթե այն պետական կամ այլ գաղտնիք է պարունակում:

Ա. Ավետիսյան (Ս. Թադևոսյան) մերժելով տեղեկատվության տրամադրումը հղում է կատարում ՀՀ մաքսային օրենսգրքի 16 հոդվածին, որի համաձայն «Մաքսային մարմիններին մաքսային գործի իրականացման նպատակով տրամադրված տեղեկատվությունը մաքսային մարմինների կողմից չի կարող օգտագործվել այլ նպատակով»: Պահանջվող տեղեկատվությունը չի վերաբերում ոչ պետական եւ ոչ էլ այլ գաղտնիքի: Ուստի դրա վերաբերյալ կիրառելի չէ ՀՀ մաքսային օրենսգրքի 16 հոդվածի պահանջը: Ավելին, լրագրողին օրենքով չարգելված ինֆորմացիա տրամադրելը չի կարող դիտվել իբրեւ «մաքսային մարմիններին մաքսային գործի իրականացման նպատակով տրամադրված տեղեկատվության այլ նպատակով օգտագործում»:

Ա. Ավետիսյանը (Ս. Թադևոսյան) մերժելով պահանջված տեղեկատվության տրամադրումը խախտել է ՀՀ Սահմանադրության, վերը նշված միջազգային պայմանագրերի եւ ներպետական օրենսդրության ինֆորմացիայի ազատությանը վերաբերող հիմարար դրույթները:

Դիմումատուն դատարանին խնդրել էր ՀՀ կառավարությանը առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահ Ա. Ավետիսյանին պարտադրել դադարեցնել պահանջվող տեղեկատվության տրամադրման մերժմանն ուղղված գործողությունները /անգործությունը/ հնարավորինս սեղմ /տասնօրյա/ ժամկետում սպառիչ տեղեկատվություն տրամադրել 09.10.01թ. թիվ 08-հ5 գրությամբ մատնանշված հարցերի վերաբերյալ:

Դիմումատուի ներկայացուցիչները պնդեցին դիմումը եւ հայտնեցին, որ «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» հասարակական կազմակերպության անդամներ Է. Բաղդասարյանը եւ Գ. Մուքոյանը լրագրողական հետաքննություն են կատարում ընդերքի ոչ մետաղական հանքավայրերի շահագործման վերաբերյալ: Այն վերաբերում է շրջակա միջավայրի եւ բնապահպանության ոլորտին, իր ածանցյալներով: 08.12.01թ. «Ազգ» օրաթերթում տպագրվել է թեմային վերաբերող առաջին հոդվածը Գ. Մուքոյանի հեղինակությամբ, վերնագրված «Էկոլոգիական մաֆիա: Հորինվածք, թե՞ իրականություն»: Այն շարունակելի է: Այդ թեմայի վերաբերող հարցերով դիմումատուն դիմել է պատասխանողին տալ դիմումում շարադրված տեղեկությունները, սակայն պատասխանողի կողմից գրավոր մերժում է ստացել այն պատճառաբանությամբ, թե իբր այդ տեղեկությունները իրավաբանական անձանց առևտրային գաղտնիք են պարունակում: Նշեցին, որ իրենք գտնում են, որ պահանջվող տեղեկությունները առևտրային գաղտնիք չեն պարունակում եւ խնդրեցին դատարանին դիմումը բավարարել:

Պատասխանողի ներկայացուցիչը դիմումատուի դիմումը չընդունեց եւ հայտնեց, որ դիմող կողմը իր պահանջների հիմքում դրել է միջազգային

կոնվենցիայի եւ դաշնագրերի համապատասխան հողվածների միայն իրեն հետաքրքրող մասերը, չներկայացնելով եւ չհիմնվելով այդ հողվածների այն պարբերություններին, որոնք արգելում են այս կամ այն տեղեկատվության տրամադրումը: Մասնավորապես, «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 19-րդ հողվածի 3-րդ կետը նախատեսում է, որ սույն հողվածի 2-րդ կետում նախատեսված իրավունքների իրականացումը հանգեցնում է հատուկ պարտավորությունների եւ պատասխանատվության: Ուստի այն ենթակա է որոշ սահմանափակումների, որոնք, սակայն, պետք է միայն սահմանվեն միայն օրենքով եւ լինեն անհրաժեշտ այլ անձանց իրավունքները եւ հեղինակությունը հարգելու եւ պետական անվտանգության կամ հասարակական կարգի կամ բնակչության առողջության կամ բարոյականության պաշտպանության համար: Նույնաբովանդակ նորմ է պարունակվում նաեւ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 10-րդ հողվածի 2-րդ կետը: Դիմումատուի կողմից պահանջվող տեղեկությունները պարունակում են առեւտրային գաղտնիք, որի հասկացությունը սահմանված է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 141 հողվածում: Իսկ առանց տնտեսվարող սուբյեկտների համաձայնության նրանց տնտեսական գործունեությանը վերաբերող առեւտրային գաղտնիք կազմող տեղեկություններ տրամադրելը կարող է առաջ բերել նշված օրենսգրքի 141 հ. 4-րդ մասով նախատեսված սանկցիաների կիրառում: «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հողվածի համաձայն մամուլը եւ զանգվածային լրատվության մյուս միջոցները իրավունք ունեն պետական մարմիններից, դրանց ղեկավարներից ստանալու տեղեկություններ, եթե պահանջված լրատվության տրամադրումը չի հակասում տվյալ կազմակերպության կանոնադրության եւ այդ օրենքի 6-րդ հողվածի պահանջներին»:

Նա նշեց, որ միջազգային կոնվենցիայի եւ դաշնագրի, եւ «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» վերը նշված հողվածների հիման վրա ՀՀ Մաքսային օրենսգրքի 16-րդ հողվածը սահմանել է, որ առեւտրական գաղտնիք կազմող տեղեկությունները մաքսային մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից չեն կարող հրապարակվել, օգտագործվել անձնական նպատակների համար եւ տրամադրվել երրորդ անձանց: Նկատի ունենալով վերը շարադրվածը եւ հաշվի առնելով, որ դեռեւս ՀՀ-ում չի ընդունվել օրենք Առեւտրային գաղտնիք չհանդիսացող տեղեկությունների մասին, ապա պատասխանողը զրավոր մերժել է դիմողի պահանջները: Պատասխանողի ներկայացուցիչը հայտնեց նաեւ ՀՀ Մաքսային օրենսգրքի համաձայն ՀՀ-ից հանքային քար արտահանող անձինք ազատված են մաքսատուրքից: Նա հայտարարեց նաեւ, որ Մաքսային պե-

տական կոմիտեն դիմողի պահանջած տեղեկություններին իրականում չի տիրապետում, քանի որ դրանց վերաբերյալ հաշվառում, ամփոփում եւ համակարգում չի իրականացվել:

Խնդրեց դիմումը մերժել:

Լսելով կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, հետազոտելով գործում եղած նյութերը եւ գնահատելով դրանք, դատարանը գտավ, որ դիմողի դիմումը ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ:

ՀՀ Սահմանադրության 24-րդ, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 19-րդ, «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 10-րդ եւ «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի 19-րդ հողվածների համաձայն յուրաքանչյուր ոք ունի ազատ արտահայտվելու իրավունք, որն ընդգրկում է տեղեկատվություն եւ գաղափարներ փնտրելու, ստանալու եւ տարածելու ազատությունը: Սակայն Կոնվենցիայի եւ դաշնագրի նշված հողվածներում միաժամանակ նախատեսվել են, որ պետության ազգային օրենքներով կարող են որոշակի սահմանափակումներ սահմանել որոշակի տեղեկատվություն ստանալու եւ տարածելու իրավունքների իրականացման մեջ: «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հողվածի համաձայն մամուլը եւ զանգվածային լրատվության մյուս միջոցները իրավունք ունեն պետական մարմիններից.... դրանց ղեկավարներից ստանալու տեղեկություններ, եթե պահանջված լրատվության տրամադրումը չի հակասում տվյալ կազմակերպության կանոնադրության եւ նույն օրենքի 6-րդ հողվածի պահանջներին:

Ելնելով կոնվենցիայի եւ դաշնագրի, ինչպես նաեւ «ԶԼՄ» մասին օրենքի նշված հողվածներից ՀՀ-ում ընդունված Մաքսային նոր օրենսգրքի 16-րդ հողվածը սահմանել է, որ սույն օրենսգրքի եւ այլ իրավական ակտերի համաձայն մաքսային մարմիններին մաքսային գործի իրականացման նպատակով տրամադրված տեղեկատվությունը մաքսային մարմինների կողմից չի կարող օգտագործվել այլ նպատակներով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, եւ որ առեւտրական գաղտնիք կազմող տեղեկությունները մաքսային մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից չեն կարող հրապարակվել, օգտագործվել անձնական նպատակների համար եւ տրամադրվել երրորդ անձանց, այդ թվում՝ պետական մարմինների, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, երբ մաքսային մարմինները կամ դրանց պաշտոնատար անձինք վերադաս մաքսային մարմնի թույլտվությամբ օրենքով սահմանված իրավասություն ունեցող երրորդ անձանց են տրամադրում համապատասխան տեղեկատվություն եւ փաստաթղթերի

բնօրինակներ կամ պատճեններ:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 141 հ. 1-ին կետի համաձայն տեղեկատվությունը առետրային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առետրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն եւ տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար, իսկ նույն նոդվածի 2-րդ կետի համաձայն տեղեկությունները, որոնք չեն կարող առետրային գաղտնիք լինել, սահմանվում են օրենքով:

Պատասխանողը, հիմք ընդունելով ՀՀ Սաքսային օրենսգրքի 16-րդ հոդվածը եւ Քաղ.օր.-ի 141 հոդվածը եւ նկատի ունենալով, որ դեռեւս չի ընդունվել Առետրային գաղտնիք չհանդիսացող տեղեկությունների մասին ՀՀ օրենքը, դիմողի կողմից պահանջվող տեղեկությունները դիտել է որպես առետրային գաղտնիք եւ նրա պահանջը գրավոր մերժել է:

Նկատի ունենալով, որ պատասխանողի ներկայացուցիչը դատաքննության ժամանակ հայտարարեց, որ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեն չի տիրապետում դիմողի կողմից պահանջվող տեղեկություններին, եւ հաշվի առնելով, որ դիմող կողմը որեւէ ապացույց չներկայացրեց դատարանին մաքսային պետական կոմիտեի կողմից այդ տեղեկություններին տիրապետման մասին, դատարանը հանգեց այն հետեւության, որ դիմողի դիմումը պետք է մերժել:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օր.ի 130-132հհ., դատարանը

ՎճՈՒՅՑ

«Հետաքննող լրագրողների ընկերակցություն» հասարակական կազմակերպության դիմումը մերժել:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանին հրապարակման օրվանից 15 օրվա ընթացքում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Վ. ԼԱԼԱՅԱՆ

## ՀԱՎԵԼՎԱԾ 2

Քաղվածքներ տեղեկատվության ազատության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունից

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

#### Տեղեկատվության ազատության մասին

Ընդունված է 2003 թվականի սեպտեմբերի 23-ին

**Հոդված 1.** Սույն օրենքի կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաեւ տեղեկություններ ստանալու կարգը, ձեւերը եւ պայմանները:
2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա:

**Հոդված 2.** Տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը

1. Տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, սույն օրենքից եւ իրավական այլ ակտերից:
2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

**Հոդված 3.** Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

**տեղեկատվության ազատություն**՝ տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու եւ դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացում:

**տեղեկություն**՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երեւոյթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձեւից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ):

**տեղեկատվություն տնօրինող**՝ տեղեկություններ ունեցող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններ եւ դրանց պաշտոնատար անձինք:

**հանրային նշանակության կազմակերպություն**՝ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաեւ առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի եւ կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններ:

**հարցում**՝ տեղեկություն փնտրելու եւ (կամ) դա ստանալու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմում:

**հրապարակում**՝ տեղեկությունը մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներով, համաշխարհային համակարգչային ցանցով (այնուհետեւ՝ Ինտերնետ), ինչպես նաեւ օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնել եւ մատչելի դարձնել:

**Չողված 4.** Տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքները

Տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներն են՝

- 1) տեղեկությունները գրանցելու, դասակարգելու եւ պահպանելու միասնական կարգի սահմանում:
- 2) տեղեկություններ փնտրելու եւ ստանալու ազատության պաշտպանությունը:
- 3) տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը:
- 4) հրապարակայնությունը:

**Չողված 5.** Տեղեկատվությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումը

Տեղեկատվության տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումն իրականացվում է Չայաստանի Չանրապետության կառավարության սահմանած կարգով:

**Չողված 6.** Տեղեկատվության ազատության իրականացումը

1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:
2. Օտարերկրյա անձինք սույն օրենքով նախատեսված իրավունքներից եւ ազատություններից կարող են օգտվել միայն օրենքով եւ (կամ) միջազգային պայմանագրով սահմանված դեպքերում:
3. Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Չայաստանի Չանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում:

**Չողված 7.** Տեղեկությունների մատչելիության եւ հրապարակայնության ապահովումը

1. Տեղեկատվություն տնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում եւ հրապարակում է իր կողմից տեղեկություն տալու կարգը, որը փակցնում է իր գտնվելու վայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում:
2. Տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձեւով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը:
3. Եթե Չայաստանի Չանրապետության Սահմանադրությամբ եւ (կամ) օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետեւյալ տեղեկությունները եւ դրանցում կատարված փոփոխությունները:
  - 1) հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները եւ ծառայությունները:

2) բյուջեն.

3) գրավոր հարցումների ձեւերը եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները.

4) հաստիքացուցակները, ինչպէս նաեւ պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները.

5) աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը.

6) շրջակա միջավայրի վրա ներգործությունը.

7) հասարակական միջոցառումների ծրագրերը.

8) քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը.

9) աշխատանքների եւ ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, զները (սակագները).

10) տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը.

11) ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը.

12) սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները.

13) սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկություններում կատարված փոփոխությունները հրապարակվում են դրանք կատարվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

5. Սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում նշված տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձեւով, տեղեկատվություն տնօրինողի ինտերնետային էջի առկայության դեպքում նաեւ դրանով:

6. Հանրային նշանակության, ինչպէս նաեւ բյուջեից հատկացում (ֆինանսավորում) ստացող կազմակերպությունները կարող են չհրապարակել սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 4-րդ եւ 5-րդ կետերում սահմանված տեղեկությունները եւ դրանց փոփոխությունները:

### **Յոդված 8.** Տեղեկատվության ազատության սահմանափակումները

1. Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք.

2) խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը.

3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.

4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).

5) խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները:

2. Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:

3. Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝

1) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպէս նաեւ տարերային (ներառյալ՝ պաշտոնապէս կանխատեսվող) աղետներին եւ դրանց հետեւանքներին.

2) ներկայացնում է ՀՀ տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպէս նաեւ բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առեւտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը.

3) չտրամադրումը բացասական ազդեցություն կունենա Հայատանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական, հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

**Հոդված 9.** Հարցումը ներկայացնելու եւ քննարկելու կարգը

1. Գրավոր հարցման մեջ նշվում է դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը: Գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը):
2. Գրավոր հարցումների գործավարությունն իրականացվում է քաղաքացիների դիմումների եւ բողոքների համար օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գործավարության մյուս ձեւերից առանձին:
3. Գրավոր հարցմանը պատասխան չի տրվում, եթե՝
  - 1) դա չի պարունակում սույն հոդվածի 1-ին մասում նշված բոլոր տվյալները.
  - 2) պարզվում է, որ դրա հեղինակի ինքնությանը վերաբերող տվյալները կեղծ են.
  - 3) դա նույն անձի կողմից նույն տեղեկությունն ստանալու պահանջով վերջին 6 ամսվա ընթացքում ներկայացված երկրորդ դիմումն է, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի:
4. Դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը:
5. Բանավոր հարցմամբ դիմողը պարտավոր է նախապես հայտնել իր անունը եւ ազգանունը: Բանավոր հարցման պատասխանը տրվում է, եթե՝
  - 1) պահանջվող տեղեկության տրամադրումը կարող է կանխել պետական հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը.
  - 2) անհրաժեշտ է ճշտել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայության փաստը.
  - 3) անհրաժեշտ է պարզաբանել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի կողմից գրավոր հարցումների քննարկման կարգը:
6. Բանավոր հարցման պատասխանը տրվում է բանավոր՝ հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում: Եթե բանավոր հարցմամբ դիմողը չի հայտնում իր անունը եւ ազգանունը եւ (կամ) բանավոր հարցումը չի համապատասխանում սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ապա տեղեկատվություն տնօրինողը կարող է չպատասխանել բանավոր հարցումին:

7. Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետեւյալ ժամկետներում.
  - 1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
  - 2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
  - 3) եթե հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:
8. Գրավոր հարցման պատասխանը տրվում է այդ հարցման մեջ նշված նյութական կրիչով: Եթե նյութական կրիչը նշված չէ, եւ դա անհնար է պարզել տվյալ հարցմանը՝ սույն օրենքով սահմանված ժամկետում պատասխանելու համար, ապա գրավոր հարցման պատասխանը տրվում է տեղեկությունը տնօրինողին առավել ընդունելի նյութական կրիչով:
9. Սույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքում հարցմամբ դիմողն իր ցանկությամբ կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով տեղում ծանոթանալ տեղեկությանը՝ հետ վերցնելով իր գրավոր հարցումը:
10. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումը իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:
11. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում գրավոր հարցման պատասխանում նշում է նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները:



**Ֆողված 10.** Տեղեկությունների տրամադրման պայմանները

1. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների եւ կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:
2. Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում հետեւյալ դեպքերում.
  - 1) բանավոր հարցումներին պատասխանելիս.
  - 2) մինչեւ 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս.
  - 3) տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս.
  - 4) սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում նշված տեղեկությունների տրամադրման մասին գրավոր հարցումներին պատասխանելիս.
  - 5) սույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետով եւ 9-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկության տրամադրման ժամկետի փոփոխման մասին տեղեկություններ տրամադրելիս.
  - 6) տեղեկության տրամադրումը մերժելիս:
3. Հանրային նշանակության կազմակերպություններն ինքնուրույն են որոշում տեղեկությունների տրամադրման համար գանձվող գումարի չափը, որը չի կարող գերազանցել այդ տեղեկության տրամադրման ծախսերը:
4. Ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակող տեղեկություն տրամադրած մարմինը կամ կազմակերպությունն այդ տեղեկությունն ստացած անձի գրավոր հարցման հիման վրա պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով անվճար տրամադրել ճշգրտված տվյալներով տեղեկություն:

**Ֆողված 11.** Տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերը եւ կարգը

1. Տեղեկության տրամադրումը մերժվում է սույն օրենքի 8-րդ հոդվածում սահմանված դեպքերում կամ այդ տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չվճարվելու դեպքում:
2. Տեղեկատվություն տնօրինողը կարող է չպատասխանել բանավոր հարցումին, եթե տվյալ պահին դա խոչընդոտում է տեղեկատվություն տնօրինողի հիմնական պարտականությունների կատարմանը, բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

3. Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաեւ դրա բողոքարկման կարգը:
4. Տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան:

**Ֆողված 12.** Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողների պարտականությունները

Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

- 1) ապահովել տեղեկությունների մատչելիությունը եւ հրապարակայնությունը.
- 2) իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումը.
- 3) տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի եւ իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն.
- 4) սահմանել իր կողմից բանավոր եւ (կամ) գրավոր տեղեկությունների տրամադրման կարգը.
- 5) նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին:

**Ֆողված 13.** Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձը

1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը կարող է լինել տեղեկատվություն տնօրինողի նշանակած պաշտոնատար անձը կամ տեղեկատվություն տնօրինողի ղեկավարը:
2. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձն օրենսդրությամբ սահմանված կարգով՝
  - 1) ապահովում է տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը.
  - 2) տեղեկություն փնտրողին մատչելի ձևով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները եւ ձեւերը:
  - 3) մշակում է ստացված հարցումների վիճակագրական եւ ամփոփ տվյալները:

**Հոդված 14.** Պատասխանատվությունը տեղեկատվության ազատության խախտման համար

1. Բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, տեղեկություն տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելը, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն:
2. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկության հրապարակումը չի կարող առաջացնել վարչական կամ քրեական պատասխանատվություն:

**Հոդված 15.** Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:
2. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերն ուժի մեջ են մտնում 2004 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության

Նախագահ

**Ռ. Քոչարյան**

2003թ. հոկտեմբերի 22

Երեւան

ՀՕ-11-Ն

## ՀՀ քրեական օրենսգիրք

**Հոդված 254.** Համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը

1. Համակարգչում, համակարգչային համակարգում, ցանցում կամ մեքենայական կրիչների վրա պահվող տեղեկատվությունն առանց թույլտվության պատճենահանելը կամ այլ կերպ դրան ապօրինի տիրանալը կամ համակարգչային կապի միջոցների օգտագործմամբ հաղորդվող տեղեկատվությունը որսալը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված տեղեկատվությունը հանձնելուն հարկադրելը՝ անձի կամ նրա մերձավորի մասին նշավակող տեղեկություններ հրապարակելու, ինչպես նաև այնպիսի տեղեկություններ հրապարակելու սպառնալիքով, որոնք տուժողը ցանկանում է գաղտնի պահել կամ անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով կամ անձի, նրա մերձավորի կամ այն անձանց գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով, որոնց տնօրինության կամ պաշտպանության տակ են գտնվում այդ տեղեկությունները՝

պատժվում է ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք՝

- 1) զուգորդվել են անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելով,
- 2) կատարվել են մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 3) տուժողին պատճառել են զգալի վնաս,
- 4) կատարվել են առանձնակի արժեք ունեցող տեղեկատվություն ստանալու նպատակով՝

պատժվում են ազատազրկմամբ՝ չորսից տասը տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքները, որոնք՝

- 1) կատարվել են կազմակերպված խմբի կողմից,
- 2) զուգորդվել են առողջությանն անզգուշությամբ վնաս պատճառելով կամ առաջացրել են այլ ծանր հետևանքներ՝

պատժվում են ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

**Հոդված 278.** Մարդկանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հանգամանքների վերաբերյալ տեղեկություն թաքցնելը

1. Մարդկանց կյանքի կամ առողջության համար վտանգ ստեղծող դեպքերի, իրադարձությունների, փաստերի կամ երեւոյթների վերաբերյալ տեղեկություն թաքցնելը կամ աղավաղելը, որը կատարվել է բնակչությանն այդպիսի տեղեկությամբ ապահովելու պարտականություն ունեցող անձի կողմից՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքները, որոնք՝

- 1) կատարվել են պաշտոնեական դիրքն օգտագործելով,
- 2) անզգուշությամբ վնաս են պատճառել մարդու առողջությանը կամ առաջացրել են մարդու մահ կամ այլ ծանր հետևանքներ՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մինչեւ երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

**Հոդված 282.** Շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկություններ թաքցնելը կամ դրանք դիտավորյալ աղավաղելը

1. Պաշտոնատար անձի կողմից բնակչությունից մարդկանց կյանքի եւ առողջության համար վտանգավոր ռադիոակտիվ, քիմիական, մանրէաբանական կամ այլ կենսաբանական նյութերով շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ այլ վտանգավոր տեղեկություններ թաքցնելը կամ

այդպիսի աղտոտման վերաբերյալ դիտավորյալ նպատակներով ակնհայտ կեղծ տեղեկություններ հաղորդելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որն անզգուշությամբ պատճառել է մարդու մահ, մարդկանց զանգվածային հիվանդություններ, կենդանիների զանգվածային ոչնչացում կամ այլ ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

**Հոդված 192.** Անօրինական գործողությունները սնանկության ընթացքում

1. Գույքը կամ գույքային իրավունքները, գույքի, նրա չափի մասին տեղեկությունները, գույքի գտնվելու վայրի կամ այլ տեղեկություններ թաքցնելը, գույքն առանց օրինական հիմքի ուրիշի տիրապետմանը հանձնելը, գույքը ոչնչացնելը կամ ակնհայտ անշահավետ պայմաններով օտարելը, ինչպես նաեւ պարտապանի տնտեսական գործունեությունն արտացոլող հաշվապահական եւ այլ փաստաթղթեր թաքցնելը, ոչնչացնելը, կեղծելը, եթե այդ գործողությունները կատարվել են պարտապան իրավաբանական անձի ղեկավարի կամ նրա հիմնադիրների (մասնակիցների) կամ նրան՝ կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող այլ անձանց կամ պարտապան անհատ ձեռնարկատիրոջ կողմից սնանկության կամ սնանկության հնարավոր կանխատեսման ընթացքում, եւ եթե պարտապանին կամ պարտատերերին պատճառվել է խոշոր վնաս՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից երկուհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով...

**Հոդված 299.** Պետական դավաճանությունը

1. Պետական դավաճանությունը՝ թշնամու կողմն անցնելը, լրտեսությունը, օտարերկրյա պետությանը կամ օտարերկրյա կազմակերպությանը կամ դրանց ներկայացուցիչներին պետական գաղտնիք հանձնելը կամ թշնամական գործունեություն իրականացնելու համար այլ օգնություն ցույց տալը, որը կատարել է Հայաստանի Հանրապետության քաղաքացին՝ ի

վնաս Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, տարածքային անձեռնմխելիության կամ արտաքին անվտանգության՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

2. Սույն հոդվածով, ինչպես նաև սույն օրենսգրքի 302-րդ հոդվածով նախատեսված հանցանքներ կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա, իշխանության մարմիններին կամովին հայտնելով կամ այլ ձևով, օժանդակել է հետագա վնասը կանխելուն, եւ եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում:

### **Հոդված 302.** Լրտեսությունը

Օտարերկրյա պետությանը, օտարերկրյա կազմակերպությանը կամ դրանց ներկայացուցիչներին պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ հանձնելը կամ հանձնելու նպատակով դրանք հավաքելը, հափշտակելը կամ պահելը, ինչպես նաև օտարերկրյա հետախուզության առաջադրանքով այլ տեղեկություններ հանձնելը կամ դրանք հավաքելը Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանը, տարածքային անձեռնմխելիությանը կամ արտաքին անվտանգությանն ի վնաս օգտագործելու համար, եթե այդ գործողությունները կատարվել են օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի կողմից՝

պատժվում են ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով:

### **Հոդված 306.** Պետական գաղտնիք հրապարակելը

1. Պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ դիտավորությանը հրապարակելն այն անձի կողմից, ով պետական գաղտնիքի հետ ծանոթանալու իրավունք ուներ, եւ ուն դա վստահված է եղել կամ հայտնի է դարձել ծառայության բերմամբ, եթե բացակայում են պետական դավաճանության հատկանիշները՝

պատժվում է կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Պետական գաղտնիքն անզգուշությամբ հրապարակելը՝

պատժվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու

իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

### **Հոդված 307.** Պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերի կամ համակարգչային տեղեկատվության հետ վարվելու կանոնները խախտելը

1. Պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերի կամ համակարգչային տեղեկատվության, ինչպես նաև պետական գաղտնիքի մասին տեղեկություններ պարունակող այլ առարկաների հետ վարվելու կանոնները խախտելն այն անձի կողմից, ով պարտավոր էր պահպանել այդ կանոնները, եթե դա անզգուշությամբ առաջացրել է այդ փաստաթղթերի կամ առարկաների կամ համակարգչային տեղեկատվության կորուստ՝

պատժվում է ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ՝

պատժվում է ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

### **Հոդված 199.** Առեւտրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկություն ապօրինի հավաքելը կամ հրապարակելը

1. Փաստաթղթեր հափշտակելու, առեւտրային կամ բանկային գաղտնիք իմացող անձանց, նրանց մերձավորին կաշառելու կամ սպառնալիքի, կապի միջոցներ որսալու, համակարգչային կամ ծրագրային համակարգ կամ ցանց ապօրինի թափանցելու, հատուկ տեխնիկական միջոցներ օգտագործելու ճանապարհով, ինչպես նաև այլ ապօրինի եղանակներով հրապարակելու կամ օգտագործելու նպատակով առեւտրային կամ

բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ հավաքելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով եւ տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հիսնապատիկի չափով կամ առանց դրա:

**2.** Առեւտրային կամ բանկային գաղտնիքն առանց դրա տիրապետողի համաձայնության ապօրինի հրապարակելը կամ օգտագործելն այն անձի կողմից, ում այդ գաղտնիքը հայտնի է մասնագիտական կամ ծառայողական գործունեության հետ կապված, որը կատարվել է շահադիտական կամ այլ անձնական դրդուններով եւ խոշոր վնաս է պատճառել առեւտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով եւ տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով կամ առանց դրա՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

**Յոթված 144.** Անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը

Մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններն առանց նրա համաձայնության օգտագործելը կամ հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ լրատվության միջոցներով այդպիսի տեղեկություններ տարածելը կամ հավաքելը կամ պահելը, եթե դրանք նախատեսված չեն օրենքով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

**Յոթված 145.** Բժշկական գաղտնիքը հրապարակելը

**1.** Առանց մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող անձանց կողմից անձի հիվանդության կամ բժշկական ստուգման արդյունքների մասին տե-

ղեկություններ հրապարակելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

**2.** Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները, որոնք անգոգուշությամբ առաջացրել են ծանր հետեւանքներ՝

պատժվում են ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Մեր կարծիքով, հոդվածի դիսպոզիցիան պետք է լրացվի այն իմաստով, որ մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության շնորհիվ վերը նշված տեղեկություններին ծանոթացած անձինք նույնպես պետք է պարտավոր լինեն պահպանելու այդ տեղեկությունների գաղտնիությունը՝ դրանց ծանոթանալու միեւնույն պայմանների պահպանմամբ»:

**Յոթված 146.** Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունը խախտելը

**1.** Քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունն ապօրինի խախտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

**2.** Նույն արարքը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

**Հոդված 169.** Որդեգրման գաղտնիքը հրապարակելը

Որդեգրման գաղտնիքը որդեգրողի կամքին հակառակ հրապարակելն այն անձի կողմից, ով որդեգրման փաստը պարտավոր էր պահպանել որպես ծառայողական կամ մասնագիտական գաղտնիք, կամ այդ գաղտնիքն այլ անձի կողմից շահադիտական կամ այլ ստոր դրդումներով հրապարակելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը երկուհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

## ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք

**Հոդված 2.** Դատարան դիմելու իրավունքը

Շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով եւ այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների եւ օրինական շահերի պաշտպանության համար:

**Հոդված 3.** Քաղաքացիական գործ հարուցելու հիմքը

Դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

**Հոդված 14.** Դատական ակտերի պարտադիր լինելը

Օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց եւ քաղաքացիների համար ու ենթակա է կատարման ՀՀ ամբողջ տարածքում:

Գլուխ 26. «Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտանատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունները /անգործությունը/ վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը»

**Հոդված 159.** Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտանատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունները /անգործությունը/ վիճարկելու հիմքերը

Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտանատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունները /անգործությունը/ վիճարկելու /այսուհետ՝ ակտն անվավեր ճանաչելու/ համար հիմք են նշված ակտն օրենքին հակասելը եւ դիմողի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված իրավունքի եւ /կամ/ ազատության խախտման փաստի առկայությունը:

**Հոդված 160.** Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտանատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն

անվավեր ճանաչելու մասին դիմումը

1. Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտանատար անձանց` օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու մասին դիմումը, գործերի ենթակայությանը համապատասխան, տրվում է քաղաքացիական գործեր քննող դատարան կամ տնտեսական դատարան:

Դատարանի քննությանը ենթակա չեն այն ակտերն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումները, որոնց` Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշելը սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է:

2. Դիմումը կարող է վերաբերել օրենքին հակասող ակտին կամ դրա որեւէ մասի:

3. Դատարանին դիմումը տալը չի կասեցնում վիճարկվող ակտի գործողությունը:

4. Դատարանը մերժում է դիմումի ընդունումը, եթե առկա է դատարանի` օրինական ուժի մեջ մտած վճիռը, որով հաստատվել է պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտանատար անձանց ակտի համապատասխանությունն օրենքին: Այս դեպքում պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտանատար անձանց ակտի համապատասխանությունն օրենքին կարող է այլ քաղաքացիների կամ իրավաբանական անձանց կողմից կրկին վիճարկվել միայն այն մասով, որը դատարանի ստուգման առարկա չի հանդիսացել:

**Հոդված 161.** Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտանատար անձանց` օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու մասին դիմումին առաջադրվող պահանջները

1. Դիմումում պետք է նշվեն`
  - 1) ակտն ընդունած պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտանատար անձի անվանումը,
  - 2) ակտն ընդունելու տարին, ամիսը, ամսաթիվը.
  - 3) ակտի պաշտոնական հրապարակման ժամանակը եւ միջոցը, եթե այն հրապարակվել է,
  - 4) քաղաքացու կամ իրավաբանական անձի որ իրավունքները եւ օրինա-

կան շահերն են խախտվել այդ ակտով կամ դրա առանձին դրույթներով,

5) ՀՀ Սահմանադրության եւ (կամ) օրենքների որ հոդվածներին է հակասում վիճարկվող ակտը:

2. Դիմումին կցվում է վիճարկվող ակտի կամ դրա որեւէ մասի պատճենը:

**Հոդված 162.** Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտանատար անձանց` օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու մասին դիմումի քննությունը

1. Դատարանը պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտանատար անձանց ակտի կամ դրա մի մասի օրենքին հակասելու հիմքերով անվավեր ճանաչելու մասին դիմումն անհապաղ ուղարկում է ակտն ընդունած մարմնին կամ պաշտոնատար անձին, որը պարտավոր է տասնօրյա ժամկետում դատարան ներկայացնել իր պատասխանը:

2. Ակտն ընդունած մարմնից ստացված պատասխանը դատարանն անհապաղ տրամադրում է դիմողին, որն իրավունք ունի եռօրյա ժամկետում դրա վերաբերյալ ներկայացնել իր առարկությունները:

3. Անհրաժեշտության դեպքում դատարանը սեփական նախաձեռնությամբ կամ կողմերի միջնորդությամբ նշանակում է փորձագետ:

4. Դիմում տված անձը, ինչպես նաեւ ակտն ընդունած պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտանատար անձի ներկայացուցիչը դատարանի կողմից պատշաճ ձեւով տեղեկացվում են դատական նիստի ժամանակի եւ վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ գործի քննության եւ լուծման համար:

5. Դատարանը դատական նիստում ստուգում է ակտն ընդունած պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտանատար անձի իրավասությունը, ամբողջ ակտի կամ դրա մի մասի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը եւ օրենքներին:

6. Պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտանատար անձի ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումը քննելիս նշված ակտն ընդունելու համար հիմք ծառայած հանգամանքների ապացուցման պարտականությունը դրվում է ակտն ընդունած մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վրա:

**Հոդված 163.** Դատարանի վճիռը

1. Պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտանատար անձի ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ գործով դատարանի վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի՝
  - 1) տեղեկություններ՝ ակտի անվանման, համարի, հրապարակման տարվա, ամսաթվի եւ այն ընդունած մարմնի կամ պաշտոնատար անձի մասին,
  - 2) նշում ակտն ամբողջովին կամ մասամբ անվավեր ճանաչելու կամ պահանջի բավարարումն ամբողջովին կամ մասամբ մերժելու մասին:
2. Այն դեպքում, երբ քաղաքացու կամ իրավաբանական անձի խախտված իրավունքը չի կարող վերականգնվել միայն պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձի՝ օրենքին հակասող ակտն անվավեր ճանաչելու միջոցով, դատարանն իրավունք ունի իր վճռով պարտադրել համապատասխան մարմնին կամ պաշտոնատար անձին՝ ընդունելու քաղաքացու՝ օրենքով երաշխավորվող իրավունքները եւ (կամ) ազատությունները վերականգնող ակտ:
3. Պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտանատար անձի ակտն անվավեր ճանաչելու մասին գործով դատարանի վճիռը պետք է հրապարակվի նույն պաշտոնական տեղեկագրում, որում հրապարակվել է այդ ակտը:

ՉԼՈՒՄ 26<sup>1</sup> . ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԱՆՎՃԱՐՈՒՄԱԿ ԲԱՆԿԻ ԿԱՄ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

Ընդունվել է 27.04.2004թ.

**Հոդված 163<sup>1</sup>.** ՀՀ կենտրոնական բանկի եւ անվճարունակ բանկի կամ վարկային կազմակերպության ժամանակավոր ադմինիստրացիայի որոշումների բողոքարկումը

1. «Բանկերի եւ վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում Կենտրոնական բանկի խորհրդի եւ ժամանակավոր ադմինիստրացիայի, ինչպես նաեւ դրանց պաշտոնատար անձանց որոշումներն ու գործողությունները կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարան՝ սույն հոդվածով սահմանված կարգով:
2. Կենտրոնական բանկի խորհրդի եւ ժամանակավոր ադմինիստրացիայի, ինչպես նաեւ դրանց պաշտոնատար անձանց որոշումները կարող են բողոքարկվել դրանց ուժի մեջ մտնելու, իսկ գործողությունների դեպքում՝ դրանք կատարվելու պահից յոթ օրվա ժամկետում:
3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված որոշումներն ու գործողություններն անվավեր ճանաչելու դիմումում պետք է նշվի այն իրավական ակտի դրույթը, որը խախտվել է բողոքարկվող որոշումը կայացնելիս, կամ որին հակասում է բողոքարկվող գործողությունը:
4. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված ժամկետից հետո ներկայացված կամ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկությունը չպարունակող դիմումները դատարանը վերադարձնում է դիմումատուին՝ առանց քննարկման:
5. Դատարանը սույն հոդվածի 1-ին հոդվածում նշված որոշումներն ու գործողությունները կարող է անվավեր ճանաչել բացառապես այն դեպքում, երբ բողոքարկված որոշումը կայացվել է օրենքի պահանջների խախտմամբ, կամ գործողությունը հակասում է օրենքին:
6. Սույն հոդվածի 1-ին մասում նշված որոշումներն ու գործողությունները բողոքարկելիս, ինչպես նաեւ դատական ողջ քննության ընթացքում դրանք չեն կարող կասեցվել:



**Չողված 140.** Վճռի օրինական ուժի մեջ մտնելը

Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտնում այն հրապարակելուց տասնհինգ օր հետո:

Չետեյալ հողվածները վերաբերում են վճռի բողոքարկմանը վերադաս ատյաններում:

**Չողված 205.** Վերաքննիչ բողոք բերելու իրավունքը

**Չողված 206.** Վերաքննիչ բողոքներով գործերը քննող դատարանը

**Չողված 207.** Վերաքննիչ բողոք բերելու ժամկետը

**Չողված 208.** Վերաքննիչ բողոք ներկայացնելու կարգը

**Չողված 209.** Վերաքննիչ բողոքի բովանդակությունը

**Չողված 210.** Վերաքննիչ բողոքը գործին մասնակցող անձանց ուղարկելը

**Չողված 213.** Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը

**Չողված 214.** Գործի քննության ժամկետը վերաքննիչ դատարանում

**Չողված 215.** Գործի քննության կարգը վերաքննիչ դատարանում

**Չողված 216.** Վերաքննիչ բողոքը հետ վերցնելը

**Չողված 219.** Վերաքննիչ դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելը

**Չողված 220.** Վերաքննիչ դատարանի վճիռը գործին մասնակցող անձանց ուղարկելը

**Չողված 221.** Առաջին ատյանի դատարանի որոշումների դեմ բերված վերաքննիչ բողոքները

**Չողված 222.** Դատական ակտերի վերանայումը վճռաբեկության կարգով

**Չողված 223.** Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք

**Չողված 224.** Վճռաբեկ բողոքներով գործերը քննող դատարանը

**Չողված 225.** Վճռաբեկ բողոք բերելու հիմքերը

**Չողված 232.** Վճռաբեկ դատարանում գործի քննության ժամկետը

**Չողված 239.** Վճռաբեկ դատարանի որոշման ` օրինական ուժի մեջ մտնելը

**Չողված 241.** Վճռաբեկ դատարանի որոշումը վճռաբեկ բողոք բերած անձինք եւ գործին մասնակցող անձանց ուղարկելը: